

կրնար վարձել՝ իբր գործաւոր կ'աշխատին. օրական վարձքը իրեք լիւրայ սղելոյն է և աւելի եւս:

Քոյրը մեր այս տեղի մարդիկ ահագին հարստութիւն դիզեր են ու ծառայութեան գործերին թողեր զնացեր են. ես ալ կը յուսամ՝ նոյն բանը ընելու: Սակայն կենաց կարեւոր ամեն բան շատ սուղ է: Մազ կտրելու, ածելուելու գինը երկուք ու կէս տող լար է: Ալիւրին լիտրը մէկ տողլար կ'աժէ: Նոյր միս անկարելի է գտնել: Կերածնիս խողի ապուխտ է և բակլայ: Սակայն ամեն ազատութիւն ունինք զետին մէջէն որչափ ուզենք լոտսիկ ձուկ որսալ:

Կրնամ կէս գիշեր ատեն անկողինս պառկած կարդալ առանց ամենեկին նեղուելու: Ամառ ատեն ոչ երբեք մուտ կ'ընէ. իսկ ձմեռը արեւուն երեսը ամենեկին չենք տեսնար. դժբաղդաբար ալ այս եղանակս ամենաներկայն է: Հիւսիսային շրջանակէն միայն 90 աստի հեռի ենք:

Հոս դրամի կիրառութիւն չկայ. վճար մունքը՝ օսկի փողով կամ օսկիի կտորներով կ'ըլլուի: Ոսկեփողին կաշիէ փոքր բաակներու մէջ կը պահեն. երբ մարդ հաշիւ մը վճարելու կ'ըլլայ, իր կաշիէ քսակը կը ներկայացնէ, որու մէջէն կշիռքով այնչափ կ'առնուն որչափ է իրաւունքնին, ու միւսը ետ կը դարձնեն:

... Արդեօք եւրոպական պատերազմ սկսած է: Այդպիսի ձայներ կը լսենք. բայց ամենեկին լուր չունինք: Չեղբերնիս հասած վերջին լրագիրները մինչև մարտ 28 կը հասնին»:



ՍՈՒՐԷԱՆԴԱՆ ԲԱԶՄԱՎԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. Մ. ԽՈՐԵՆԱՅԻՈՅ Դ ԳԻՐՔՆ

Մար—Աբասայ խնդիրն արծարծեցաւ վայրկեան մի բամասիրաց մէջ իւր բոլոր ուժով եւ յետոյ մարեցաւ. կը յուսացուէր թէ այնու լուսաբանութիւն Խորեմացույ մասին եղած շատ խնդիրք եւ տարակոյսք, որոց մէջ կըմայ հաշուի մա եւ Դ զրոց խնդիրն, որ ժամանակաւ ըստ բաւականի զբաղեցուց բամասերմերը, ու մեծաւով իւր պաշտպանմեքը եւ հսկառակորդները, սակայն առանց վերջնական եւ որոշիչ եզրակացութեամ մի: Կարծեմ վերջինը Միաբան եղաւ որ Արարատի (1891, փետր. 87) մէջ շամաց հերքել փաստերով այն որ զոյութիւնը չեղաւ մէկմ որ չատագով համոզիսանայ: Փափագելի էր զիտմալ թէ ի՞նչ է յարդի բամասիրաց կարծիքը:

2. ՇԱՐԱԿԱՆԱՅ ԵՂԱՆԱԿԱՆՈՐ ԵՒ ԻԱԶԵՐՆ

Որո՞ւ կ'ըմծայուի արդեօք մեր շարականաց եղանակներու եւ խազերու մախկնմ գիւտմ. բմիկ ազգայինը հմ մորա, թէ մեր դրացի ազգերէն փոխառութիւնք, ինչպէս կը տեսնուի այդ գրական ուրիշ միւղերում մէջ:



ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ԲԱԶՄԱՎԻՊԻ ՍՈՒՐՉԱՆԴԱԿԻՆ

1. ԹԱՏՐՈՆ Ի. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Ա. պատմական յոգնի ամսոյ Սոսրիան
դակի երկրորդ հարցման).

Սոսրիանդակի փորձառու և հմտագործ
մանկավարժաց առջև հետեւեալ հարցերը կը
գնէր լուծելու՝ Բաւմալի Գունիս ամսատե-
արի մէջ (էջ 270).

ա. Թատերական տեսարանը աշակերտաց
օգտաւէտ են թէ ֆէասակարք.

բ. Հասակի և մտաւորական զարգացման
շափն զանազանութիւն կը բերէ այս մասին.

գ. Եթէ օգտաւէտ են՝ ինչ բանի մէջ
կայացեալ է նոցա օգուտն.

դ. Եթէ ֆէասակարք են՝ ցոյց տալ ֆէասի
պատմաւորներն և նոցա արդիւններն.

ե. Հետեւեալ. ինչպէս պէտք է վարուին
այս մասին ծնողք և դաստիարակը, այլ և
քահանայք՝ իրիկ. դաստիարակը ժողովրդեան
թէպէտեւ են ոչ փորձառու և ոչ ալ հմտա-

գործի մանկավարժի յաւակնութիւնն ունիմ,
այլ կ'աղիմ երկու խօսքով ինծի բնական
խելքի պատշաճագործի երկցածն յայտնել,
խմբագրութեանց թողովը զայն հրատարակե-
լու կամ հակառակը գործելու որոշողութիւնը,
իբր արժանի և կամ անարժան մտածութիւն
հրապարակ հանելու:

ա. Ըստ իս՝ թատերական տեսարանք
ուրիշ բան չեն՝ բայց եթէ մարդկային կե-
նաց պարագաներու զանազան երևոյթներ
կամ դիպաց հիւստեան մը՝ արուեստական
կերպով և կեդծեալ անձանց ձեռքով կատա-
րուած, և կամ եթէ հնար է այսպէս բա-
ցատրել՝ բնականին հետեւութիւն կամ ձեւ-
ցումն արուեստական կամ միմտական կերպով.
որով տեսողաց վրայ աւելի կամ նուազ ազ-
դեցութիւն կը թողու, և նոցա բարոց վրայ

աւելի կամ նուազ փոփոխութիւն կարող է
ներգործել: Ուստի եթէ բարի նպատակա-
յորինուած են թատերգութիւնք (որ և իցէ
տեսակ ալ լինին)՝ միշտ բարի արդիւնք կ'ու-
նենան ամէն տեսողաց վրայ, ի բաց չառ-
նելով նաեւ աշակերտները. իսկ հակառակ
դէպքի մէջ՝ ֆէասակար է այն տեսարանաց
ազդեցութիւնն:

բ. Հետեւեալը հասակի և մտաւորական
զարգացման համեմատ՝ աւելի կամ նուազ
կը լինի թէ բարոյ և թէ՛ շարի ազդեցու-
թիւնն իւրաքանչիւր անձի սրտի և մտաց
վրայ, ուստի նաեւ կամաց ու գործոց վրայ:

գ. Օգտաւէտ կամ բարի նպատակաւ յա-
րինուած և տեսարանի վրայ ներկայացուած
թատերգութիւնք մի և նոյն օգուտներն
յառաջ կը բերեն մարդկանց (որով և աշա-
կերտաց) վրայ, ինչ օգուտ որ կ'ընեն բարի
անձանց գործնական բարի օրինակներ ու
խօսքերը՝ մարդկային կենաց այլեւալ իրա-
կան պարագայից մէջ:

դ. Վնասակար կամ ապականիչ սկզբ-
ունքի կամ նպատակի ծառայող թատերա-
կան տեսարանք ալ ընդհակառակն մի և նոյն
շարքիներն յառաջ կը բերեն մարդկային բն-
կերութեան զասակարգի (ուստի և աշակեր-
տաց) մէջ, ինչ որ վատթար օրինակք և
գործք իրական կեանքի տեսակ տեսակ պա-
րագաներու մէջ կը ծնանին:

ե. Հետեւեալ. ի՞նչոցա, դաստիարակաց
և նաեւ քահանայից պարտքն է (ինչպէս օգ-
տակար և ֆէասակար զբերու ընթերցման
մէջ, այսպէս ալ) որոշել լաւ թատերգական
տեսարաններն ի վատթարներէն. զգուշացը-
նել զօրդիս, զաշակերտս և զօգովորդն երկ-
րորդներէն և ջանալ որ ներկայ գտնուին ա-
ռաջնոց, և ոչ թէ ընդհանրաբար դատապար-
տել և արգելք դնել որ և է թատերաց յա-
նախելուն, որով զրկել զիբերն այն բարիք-
ներէն՝ որք բարոյապէս և մտաւորապէս ի-
րենց օգտակար պիտի լինէին:

ԲԱՆԱՍԵՔ



Յ. ԳԱՌԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՈՐԲՄԱՌՈՅ ԵՒ ՍԱՀՄԱՍՏԻ ՀԱՅՈՑ .

(Մասնական պատասխան յոռիս ամսոյ Սոսրհանդակի երրորդ հարցման)

Բաշմալի յուրիս ամսոյ Սոսրհանդակն փափաք էր յայտնէր (1897', էջ 334) որ ազգային օրագրաց և ուսումնական թղթերէց՝ բարեհաճին տեղական սովորութեանց հետ միասին՝ ծանուցանել ընթերցողաց նաև «խրաքանչիւր տեղեաց յատուկ բառերու կամ դարձուածներու ցուցակ մի» յագում հայ լեզուի բանասիրութեան :

Հաճութեամբ քրտի կ'ուղարկեմ առ Խմբագրութիւնդ Հետեւեալ Խառնք, զորս հաւաքեր եմ Պարսկահայոց Ուրմիոյ և Սալմաստի գաւառներուն զիւղերը այցելած ժամանակս, սակայն առանց փոյթ ունեցած լինելու նշանակելու ժամանակին որ բառին որ գաւառի վերաբերիլը . թէպէտ և ընդհանրապէս մի և նոյն բառերը համազօր նշանակութեամբ կը գործածուին երկու գաւառաց մէջ ալ :

ԲԱՆԱՍԻՐ

Բառք

Նշանակութիւնք

Ըլկալ	Նայել . պշնուլ :
Ջրածիկ, պոլիկ	Ջրոյ աման :
Խարճկաթ	Ուրիշ գաւառականաց Խալըրկարն է, որ է խաչաձև երկաթ թոնրի բերանը դնելու և կերակուրը վրան տաք պահելու համար :
Կորոտ	Կարճահասակ մարդ, թզուկ :
Աննատ	Ուրմի մէջ փորուած դարան, բաց սօղապ, հիւսիսէր :
Կտուր	Տանիք :
Էրդիտ	Տանիքին մէջտեղ բացուած լուսամուտ ծակը (բառակոտի) :
Գողտիկ	Մարան (կամ որ և իցէ ուտելիք պահելու տեղ) :
Փեթակ	Մեծ բարձր ամբարանոց տախտակէ շինած՝ ալիւր և ցորեն պահելու համար :
Կատ	Բամբակի մանածը դեռ կծիկ չեղած, կարծ :
Վիլիկ	Բամբակը թելի վերածել :
Պահէզ . Պահէզ	Բանջարանոց, սեխնոց, և այլն . պօստան :
Ճնճուկ	Փոքրիկ ճախարակ մը՝ լաթ հիւսելու գործիքին վրայ :
Կակօ	Հօրեղբայր :
Շմմ, ինչմա	Ինչն համար :
Ճիւղիկ	Պինդ զետեղել . — Յաղթահարել զուրիշը :
Սարէկ	Ծծուկի բերանը կապելու կովու ստամոքսը՝ մածունէն կարապ հանելու համար :
Ժածիկ	Թարմ թան, որ կծու խոտեղինաց հետ խառնած պանրի պէս կ'ուտեն :
Թոժան	Փոքրիկ կաշիէ պարկ, որոյ մէջ մածունը կը քամեն :
Պոպրկ	Ընկոյզ :
Ջոնդիկ	Հովանոց (ուտի բառ) :
Դոկեց	Դրացի :
Ճուլթ	Ողկոյզ խաղողոյ :

Թանապուր, Գայլահաշ	Համեմեներու և կորկոտի հետ մէկտեղ տաքցուցած թան :
Ղուլիկ	Ներքերան կաւակերտ ջրի աման, ուր ջուրը զով կը մնայ :
Խոնդակ	Տօլմա (տնկ.) :
Եղինձ կամ Եղինծ	Փիլաշ (տնկ.) :
Պաղակիթ	Քեօֆտէ (տնկ.) զուտ մտով, առանց տերևապատ ընելու :
Թանախիւս	Թանէ ձաւարէ և կարագէ բաղադրեալ կերակուր :
Թաղիք	Գէլէ, կապերտ :
Փշուկ	Կանաչեղէն մը. — Բացախ կամ ազոխի ջուրը. — Բարակ խմորի շերտ (կերակուր) :
Չուածհեղ	Կարագի մէջ թեթև եփած հաւկիթ :
Խորխոռակ	Գաշիոն կամ նարկիլէ :
Պլոկիւ	Կողոպտել :
Սարագ	Բանուր, մշակ :
Խրձիկ, Խրծիկ	Քուրլա, խեւեքիկ, աղայոց խաղալու համար շինուած և զգեստաւորած փոքրիկ մարգաններ :
Ճլոր	Փոքրիկ պտուկ :
Չէտ, Խէտ	Մանր, փոքրիկ. — Երեսխյ (ծես տղայ) :
Թխել (հաց)	Թոնրին մէջ լաւաշը կպցընել՝ որ եփի :
Մըծում	Մեծ հողէ աման բոլորի ձևով, որոյ մէջ կարագ կը շինեն :
Ջիր, Ճիր. — Ջրոտնալ, Ճրոտիլ	Բարկանիւն, ոխ, բէն. — Բարկանալ, սրղողիլ :
Ջիրու (գործել, խօսել)	Ոխով կամ հակառակութեան հոգւով գործել, խօսել, և այլն :
Կօկօն	Գլուխ :
Կրամբի	Սրուակ (bouteille)
Փթիր	Թրիք, ամառ :
Պոտել	Շփել. — Գոմէշի քամակը ջրով շփել :
Անժուր	Լուբիա :
Աւելու	Աւելում, մեծ պահօց փետրաւոր սոխն, (քարաքօհձօլօզ) :
Կուտապ	Կարկանդակ (պօղալա) Միջինքի մեծ պահօց :
Խինծ	Սինծ, քաղցր խոտ մը զաշտերու մէջ, որ կ'ուտուի :
Փուշկշա	Տեսակ մի ծառ՝ որոյ պտղէն օղի կը հանեն :
Պալէն	Կաթ կ'ընելու կամ մածոն բռնելու մեծ աման :
Մէրան	Մածոնի քացիու (մայա) :
Գովալ	Ողբաձայն կարգալ, աղօթել, տաղ ասել (մեռելի մօտ) :
Անլրտի	Անլագ (խմել, ուտել) :
Շարապալ	Ուխտի երթալ տեղ մը՝ մէկտեղ ուտելիք տանելով :
Տօրաղ	Տեսակ մը ուտելի խոտ. ազգէն :
Լողպել. — Լողպուկ	Կողոպտել, մերկացընել. — Մերկ, կողոպուտ :
Լաղըրնալ	Նիհարանալ :
Ջալիմ, Ճաճիմ	Մեծ ծածկոց անկողնոյ :
Ջուրնըկաթ, Ջուրնկաթ	Կիտախողովակ փայտեայ ծորակ՝ տանեաց անձրենները փռողը թափել տալու համար :
Մինատամ	Ուտեցք. լիպան :
Կարկաղ	Խարկած ցորեն :
Պիժար աննել	Վատ խոտերը արտերէն կամ ածուներէն խել :
Խառնիս	Տօնախմբութիւն, խնջոյք, հարսանեաց ուրախութիւն :
Խեռնիկ	Կերակուր եփելու պտուկ :

Խոսկան, Հասկան	Երկաթէ ձող որուն մէկ ծայրը կեռ է՝ պտուկը թոնրէն վեր Հանելու համար, իսկ միւս ծայրը բոլորշի տափակ թոնրին կրակը խառնելու համար :
Խոսկան (տաշտի)	Տաշտի մէջ մնացած խմորը քերելու երկաթէ ձողիկ՝ ծայրը բոլորշի տափակ :
Կոտնակ, Գրտնակ	Գլան փայտէ՝ լաւաշ բանալու համար :
Մանկեռ	Մանար պարտիզպանի, Հնձուած խոտը ժողովելու :
Քառէշք	Քառաժանի մեծ սանտր, խոտ ժողովելու կամ կալին յարդը Հովին տալու համար :
Ղէմիւն	Քառաժանի մեծ՝ յարդի համար :
Նետ (ճենճերի)	Մէջ մասը ճենճերին՝ որուն վրայ հաստատուած են աստիները :
Կուշտ նետի	Չողին երկու բարակ ծայրերը :
Սամի	Լուծին վրայի շորս փայտէ զամերու մէջտեղը, ուր կ'անցնէ եղը իւր զուկը :
Սամաթեռ	Սամինի վրայի կապը :
Ճարճատուկ	Սե — կարմիր — ճերմակ փետրօք փոքրիկ ճճակեր թուշուն մը :
Տիւղ	Միւր :
Ճիր կամ Զիր անիւ	Միւրը կոտրել, խարրը մնալ, քիւսմէք :
Ղիճ (աչք)	Շիւ :
Մնթրոց	Չող փայտեայ՝ թոնրի կրակը խառնելու :
Ղիթիկ, Կիթիկ	Տօպած (տնկ) . փայտեայ տանձանէ պտուտակաւոր խաղալիկ աղայոց, սրածայր վերջաւորութեամբ :
Շխտուկ	Կոծիծ :
Հալորիկ	Ալեւոր, ծերացած :
Սուեղ	Բանջար մը :
Սրէջ	Սափորի ստորին մասը կամ խորը :
Շաղափ	Մեծ պոչոյտ, մատղապ :
Եզրահան	Տախտակին եզերքը հարթօղ գործիք. չիւշտէրէ :
Դարձ, դարձեր (յորձ)	Մէկ որմէ միւս որմը ձգուած զուգահեռական գերաններ, որ տանիքը վեր կը բռնեն :
Փարտիւ	Առաստաղի գերանէ մը զէպ ի միւս գերան շարուած բա- րակ փայտեր, որ տանեաց հողը վեր կը բռնեն :
Թանա	Քթի օղ, զարդի համար :
Գօտիկ, Կոտիկ	Կանանց գլխարկ մը :
Թարթափ	Արտանուէնք :
Ճթիք	Դրամներով շինուած՝ կանանց զարդ մը գտակի եզերքէն կախելու համար :
Մսկտուր	Ջրոցը և թարախակալումն (տօլամա) :
Խիզար	Մեծ սղոց՝ երկու մարդով բանուելիք :
Շակլա	Տհաս ծիրան :
Շակլիզտակ	Սունիկ :
Քանած, քոտնած	Մարդիկ հիւանդութենէ մնացած սպիներով զէմք (չիւէք պօ- զուդոյտ) :
Կոտնակ	Կովու, ոչխարներու պարարտութիւնը թափելու տեղ :
Միւսիւմ	Տեսակ մը ուտենի :

Բուհ, Բուխ Դրոպ (փխսկիչ):
 Փեղամ Եղիպտացորեն:
 Խուց, Խորան Աւանդատուն (եկեղեցւոյ):
 Կռէա Վանդաւած պատի հողէ կոշտեր:
 Փռուիլ Թօթափել ծաղկանց:
 Փինտել Ջարձիւնու ծառոց, ծելու:
 Ընկեր, Ընկերք Հորթ ծնած կուլուն գորս թափուելիք աւելորդ աղեաց մասն:

Շարայարելի

Յ. ՅԱՆՆԱՅԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԽՆԴԻՐ

(Շար. տես յէջ 492)

Բանասեր. — Եթէ այդ կարծեցեալ «ազատութիւնն ի դժուարութեանց և ամենաճամբն դիւրութեան» ձիւղն է միայն որ դեռ այսուհետեւ կը կապէլ դրիզ և քո կուսակիցները տառական դրութեան հետ, ես կը յայտնեմ՝ որ այդ կապն շուտ անգոր է և շուտ խզելի, երբ ապացուցանեմ վերոյգրեալ թերութեանց ցուցակին նաեւ եօթնէրորդ թուականը բովանդակութիւնը. և այդ վերջին կապին ևս խզմամբ՝ անշուշտ այսուհետեւ պէտք է դուք ևս անխզելի կապով կապուիք ձայնական սկզբունքի հետ:

Խարայեղեան. — Ուրեմն ի՞նչպէս հաւատ տել կարող ես դուն՝ որ տառական դրութիւնն ոչինչ պակաս ենթարկեալ է այն աւելն դժուարաբեանց, զորս ունի ձայնական — սկզբունքի գործադրութիւնն:

Բանասեր. — Քիչ առաջ արդէն մէջ բերի ձայնական դրութեան իսկական դժուարութիւններն, այսինքն՝ աշխատութիւնն ստուգելու նախ թէ որ անունն որ ազգի կը պատկանի, և հրկրորդ թէ այն ազգն՝ որոյ կը պատկանի անունն՝ ինչպէս կը հնէլ գայն, որ ըստ այնմ ալ ուղիղ ձայնագրութիւն կայեցիւնի մէջ: Եւ ահա այս երկու դժուարութիւնք ոչինչ ընդհատ ընդառաջ կ'ելլեն թարգմանողին նաեւ տառական դրութեան մէջ, այնպէս որ եւս ալ կարող կը լինիմ՝ առանց հոգեորական լափազանցութիւն գործածելու քեզ նման՝ հարգընել:

Ա. «Ի՞նչ պարտաւորութիւն ունիմ ես ուսանչդ աշմեման ամեն մի ազգի նորագոյն ձեւերն անոնց գտնողն անոնանց հնագոյն ձեւերը, և քոյով նորագոյնը՝ հնագոյնը գրել: միևնչեւ երկու ձեւերն անոն ալ անունն միշտ անունն է, և եթէ պատահական իմաստ ևս

ունենայ՝ ընտ կարևորութիւն լռանի, քանի որ ոչ իբրեւ իմաստ, այլ պարզապէս երբև անուն կը փոխարեկրտի լեզուէ լեզու»: — Եւ յիշատի, Թարգմանողին համար ի՞նչ կարեւորութիւն կայ գիտնալու թէ օրինակ իմն Յակովք երայեցիցիներնի մէջ կը նշանակէ խաբող կամ սիրող կամ առեցող, քանի որ իբր անունն մէջ կը բերուի. այսպէս ալ ի՞նչ կարևորութիւն կայ գիտնալու թէ Ժաք և Ճիլմա և Ջիակոբք կամ Ջիակոմոյ և Երադար, և այլն, մի և նոյն Յակովք անունն զանազան ձևագրութիւններ են, զորս (ըստ տառական դրութեան) մէկդի թողով՝ պէտք լինի միայն Յակովք անունը գործածել, ամեն անգամ որ հանդիպելու լինի Թարգմանչին անոնցմէ մին և կամ միւրն. և կամ պարտաւորեալ լինի Թարգմանչին ոչ թեթեւ աշխատութիւն կրել ստուգելու թէ՛ զոր օրինակ՝ John աւանունն արդեւ շո՞ր անունն մի է թէ հին աւանուն՝ բայց նոր ձեւի ներքեւ, և թէ որն է արդեւք իրեն հնագոյն ձեւն՝ եթէ կայ. և նոյն աշխատութիւնը պէտք է կատարէ նաեւ ուրիշ առթով Jean և Giovanni և Nani և Ivan, և այլն ձեւերու վրայ, մինչև որ կարենայ ստուգել թէ այդ ամէնն նոյն են հնագոյն Յովնանեւ անունն հետ, և պէտք է Յովնանեւ գրուի չայեցիւնի մէջ: Այսպիսի հետազոտութեան աշխատանաց պիտի ենթարկէ ինքզինքը Թարգմանչի մը որ կարենայ իմանալ թէ Florence (Ֆլորանս) և Firenze (Ֆիրենց) ներկայացած ժամանակի ինքը պէտք է Florentia (Փլորենտիա) կարողայ և գրէ և ոչ թէ Փլորենցի և Փիանցի, կամ Naples և Napoli (Նապլը և Նապոլի) անունները պէտք է Νεάπολις (Նէապոլիս) յունական հնումը կարողայ և գրէ, և ոչ թէ Նապլի և Նապոլի, և կամ Padoue և Padova (Պադուա և Պադովա) անունները պէտք է Patavium (Պատաւիւմ) հին ձևագրութիւնն յիշէ և ըստ այնմ հնչէ և գրոյմէ. այսպէս ուրիշ հարկաւարտ անձանց և տեղեաց աւանուններ:

Բ. «Ի՞նչ պարտաւորութիւն ունիմ ես՝

ավե՛ն մի ազգի գէթ ճայնանոր տառերոյ ղեւ-
րեղցոյնը սոյլսրել, որպէս զի կարող լինիմ
ըստ նայանեաց դրոշմեան անխից հայադրել
ճայնանոր գրերն ու երկարարտանքներն: — Եւ
յիբաւի, եթէ իւրաքանչիւր լեզուի ճայնա-
ւորներն կամ երկարարտանքն տառական
դրութեամբ թարգմանեմ՝ թէ՛ խտաւոր և
այլանշակութեամբ և երբեմն նաև անհեղինակ
նուններու շարք մը պիտի ստեղծեմ՝ ծաղրե-
լի և եպերկի լինելով համալսարհի առջև,
և թէ՛ ի նմին ժամանակի՝ չոր քսածիդ հա-
մաձայն « Հակասութեան մէջ պիտի գտնուիմ,
եթէ տառից թարգմանութեան մի մասին
(քաղաքայնից) մէջ ճանաչելով (նայանեաց
տառական) օրինաց իշխանութիւնը և լաու-
նաթիւ միւս մասին (ճայնանորաց) մէջ դայն »
չընդունիմ և մերժեմ: — (էջ 84. ք. 28):

Թէ արդարեւ նախնիք օրինադրած են գէթ
երկարարտանքերը (ըստ տառական դրութեան
խօսելով) ոչ թէ նիւթապէս տառ տառի
գարձելով, այլ ճայնը դրոշմել՝ անժխտելի
ապացոյցութեամբ և հազարաւոր օրինակներով
յոյն և րատին անուանց թարգմանութիւն-
ներէ. զոր օրինակ, Ալքսիպոս (Եգիպտոս),
Νεΐλος (Նիլոս), Βοιωτία (Բիոպիա), Δαί-
δαλος (Դեդալոս), Φειδίας (Փիդիաս), Καί-
σάρεια (Կեսարիա), Ακχεδαίμων (Լակեդե-
մոն), Τροία (Տրոյա), Αἰώπιος (Եպիպոս),
Ἀριστείδης (Արիստիդէս), Γαλιλαία (Գալի-
լէա), Εὐβοία (Եւբոյա), Ἱεραιθός (Հեիբե-
տոս), Αλαμέδων (Լաւամեդոն), Αἴμος (Հե-
մոս), Οἰζίπους (Օիզիպոս), Ποσειδών (Պոսի-
դոն), Σιμόεις (Սիմոյիս), Αἰολεΐς (Եւոլա-
ցիք կամ Եւոլիոսք), Νίκαια (Նիկէա), Πει-
σίστρατος (Պիստրատոս), Ἀλεξάνδρεια
(Ալեքսանդրիա), Ὀρφεύς (Որփեւս), Φαίακες
(Փեակեանք), Σέλευκος (Սելեւկոս), և այլն,
և այլն, կամ Scævola (Սկեւոլա), Cæsar
(Կեսար), Dædalus (Դեդալոս), Paulus
(Պաւլոս), Phædrus (Փեդրոս), Taurus
(Տաւրոս), Αἰνεία (Էնէաս), Αἰγίστος (Եգիս-
տոս), Κρέσος (Կրեսոս), Λαοκoon (Լալ-
կոն), Τροένη (Տրեդիէն), Μοῦσας (Մուս-
սէս), Παλῆμων (Փալեմոն), Αἰμιλιανός (Եմիլիանոս),
Βριαρεὺς (Բրիւ-
րեւս), Plautus (Պլաւտոս), Λαοδίκη (Լա-
ւոդիկէ), Αἰακός (Իակոս), Γαῦλια (Գե-
ուլիա), Νέβιος (Նեւիոս), Τετονες (Տե-
տոնք), Κλέλια (Կլելիա), Αἰτνα (Էտնա),
Cæcilius (Կեկիլիոս), Στοιχεί (Ստոյիկեանք),
և այլն, և այլն:

Ուստի կամ պէտք է թարգմանողն նախ
նեաց կանոնն յարդէ և զանազան լեզուաց
ընթերցման ուսումը նախ սովորի, և կամ
խոտորեցող նախնեաց կանոնն՝ ծաղրածու-

թեան և հակասութեան ենթարկուի: Ահա
այս երկու պարագաներէն՝ առաջ կու գան
նաև տառական դրութեան մէջ՝ այն դժուա-
րութիւններն զորս տեսանք ճայնադրութեան
մէջ, այսինքն, հարկ՝ ճանաչելու նախ թէ որ
անոնքն որ ազգի կը պատկանի՝ որ ըստ
այնմ ալ ճայնաւորներու հնչումն որոշուի, և
երկրորդ՝ թէ՛ այն ազգն (որոյ կը պատկանի
քննութեան ենթարկութեամբ անունն) ի՛նչ կա-
նոններով կը կարգայ կամ կը հնչէ իւր ճայ-
նանոր կամ երկարարտա տառերը, որ ըստ
այնմ ալ փոխարեւորէ հայերենի մէջ: —
Բաց ասորի, դարձեալ՝

Գ. « Ի՞նչ իրաւունքով պէտք է աշխատիմ
բռնադատելու միշտ ականչներս՝ որ յոյն և
լատին այբուբենն ծագումն ունեցող տառե-
լոր տառական դրոշմեանք հնչեն (և մատներս
ալ գրեն) յաժժիս հասկառալ, իսկ ընդհակա-
ռակն սեմական լեզուաց մէջ մի և նոյն հնչ-
յումն ունեցող տառերը հնչեն (և զրիչս ալ
գրէ) հայերէնի մէջ յաժժիս համահասն: . .
Որով, եթէ վերջնոց մէջ ճայնադրութեան
կը հետեւի, ի՛նչ պատճառաւ՝ ես ինձի հա-
կանելով, առաջնոց մէջ պէտք է ճայնադրու-
թեան դմ պատերազմելու աշխատիմ: . .

Ուրեմն տառական դրութեան նաև այս
պարագաներու մէջ ընդ առաջ ելած դժուա-
րութիւնք ոչ ինչ նուազ ծանր են և աշխատան-
քեան նիւթ կը մատակարարեն թարգման-
չին, և նոյնպէս քաղաքագրեան Յատկա-
նաանց քաղաքի օգնութեան կարօտութիւն
ունին լուծուելու համար, ինչպէս ճայնական
դրութեան մէջ: Այս դիրքի մէջ ուրեմն ի՛նչ
պիտի լինի չոր որոշողութիւնն, Պր. Խորայե-
լեան . . Կայդ դեռ ևս ինձ անծանօթ ճա-
նապարհ մը՝ տառական դրութեան այլաբան
անտեղադրեանց և դժաւարադրեանց լարիւրին-
թոսէն ազատուլ, բայց ի ճայնական — սկզբ-
քանքի միջին մանապաղին, որով և թէ՛ դը-
ժուարութեան իրապա չեն վերցուիր, գէթ
անտեղութիւնք կը բարձուին:

Խորայեղեան. — Խնդրեմ առ այժմ ժա-
մանակ շնորհիս ինձ որ վրան մտածեմ: . .
կամ պատահական ճամար հարցմանդ: . .
կամ լուծութիւն պահելով՝ ճայնական սկզբնա-
քի հրաւիրանաց հետեւելու:

★ ★

Ծիշել. — Վերջապէս . . Որքան ուրախ
պէտք է լինել՝ որ Պր. Խորայեղեանի և չոր
անհատնում դրոշմատրութիւնդ աւարտեցաւ,
ունկնդրացս մեծ համբերութեան հետ: . . Եւ
միթէ հարկ էր այդքան երկար վիճել խնդրոյ

մի վրայ՝ որ արդէն գործնականացաւ որոշուած է ներկայիս մէջ ընդհանուր ազգային զբաղեանքէ, որք ամենեւին ուշադրութիւն չեն դարձնել և պիտի չդարձնեն ալ Պր. Խորայեւիանի գրած պատասխանին նման բողոքներու, որք իրենց անձուկ չըլլապատէ մ'անգղին արձագանգ չեն գտնելու: — Այո՛, տառապանք դրոշմներով մեռած է, և մեռելի վրայ չարժեք երկար խօսիլ. այժմ ես և դու, ձայնագրութեան հետևողներս տեսնենք նախ արդեօք կա՞յ մէջերիս տարաձայնութիւն նոյն սկզբունքի գործադրութեան մասին, և երկրորդ՝ ճշգրիտ սահման գծենք այդ մեր տարաձայնութեան, և երրորդ՝ որոշենք թէ ո՞ր կողմն պիտի հետևի միւս կողման:

Բանասեր. — Կարծեմ ես ըստ բաւականին մանրամասն և պարզ ներկայացուցի իմ համոզումս ձայնական սկզբունքի և նորա գործածութեան մասին, Պր. Խորայեւիանի հետ պայքարած ատենակաւ: Կը մնայ ուրեմն որ դուն ալ, Պր. Միշէլ, քո համոզումդ բաղդատես իմ ըսածներու հետ, և որ մասն ի համաձայն կամ որէ՛ն տարաձայն լինիլդ յայտնես:

Միշէլ. — Ըստ ամենայնի համաձայն եմ քեզի հետ, բայց ի մէկ կէտէ:

Բանասեր. — Յայտնէ այդ կէտը:

Միշէլ. — Կը յիշես որ Պր. Խորայեւիանի հետ խօսած ատենդ ըսի՞ր՝ որ դուն «Նշխանեաց ղնդինադարձելու պիտի կը քանես և կը յարգեն» միայն իրենց ի գործ դրած ձայնական սկզբունքի մէջ՝:

Բանասեր. — Այո՛, այդպէս է:

Միշէլ. — Կը յիշես նաև որ ըսիք թէ «Նշխանի իրենց գործածած լեզուին և Ժա. մանակակից անձանց նման՝ կորոսներ են իւրենց ճրարմայնեղ և օրինադրեղ իրաւունքը սեր սերունդի մը»:

Բանասեր. — Այո՛, ըսի, բայց . . .

Միշէլ. — Բայց չկայ . . . Դուն այս խօսքերովդ յայտնի հակասութեան մէջ ես. վասն զի նախ կը հաստատես որ նախնիք իրենց հեղինակութիւնը և օրինադրելու իրաւունքը կորուսել են նոր սերունդից վրայ, և յետոյ կը դառնաս կրօնի որ դուն կը բանես և կը յարգես նախնեաց այդ կորուսած և այլ ևս հրամայելու իրաւունքը չունեցող հեղինակութիւնը . . . Ասկից աւելի յայտնի հակասութեան կրնայ լինիլ:

Բանասեր. — Այո՛, չէր կարելի լինել՝ եթէ ես այդքան միայն ըսած լինէի. բայց կարծեմ դուն մոռացեր ես որ իմ երկրորդ նախադասութիւնս յաւելուած մ'ալ ունէր, զոր ես շեշտեցի իսկ վրայ բերի թէ՛ նախնիք կորուսել են իրենց օրինադրելու կամ հրամայելու իրաւունքը այն ամեն պարագայից մէջ, որ այս վերջինս (Հայ Ժողովուրդն) ընդհանուր միաձայնութեամբ փոփոխած է առաջիններէն. — Այս խօսքերս ալ ըսի՞ թէ ոչ . . .

Միշէլ. — Այո՛, ըսիք. բայց այդ խօսքերէն ի՞նչ կը ծագի:

Բանասեր. — Այն յառաջ կու գայ՝ որ մենք պէտք ենք իրաւացի և պարտաւորիչ ճանաչել նախնեաց օրինադրական իշխանութիւնը կամ հրամանը, քանի որ Հայ Ժողովուրդը մերժած կամ փոփոխած չէ այդ հրամանն ու օրէնքն ընդհանուր միաձայնութեամբ: Բայց արդ՝ Նախնիք սահմաններ և հնչել են մեր քաղաքացիները (Համեմատաբար յունական տարից հետ)՝ հետեւող աստիճանաւորութեանց ու դասակարգներու:

Հերկք

Շրթնայինք	.	.	բ = β = b
Կոկորդայինք	.	.	գ = γ = g
Ստամայինք	.	.	դ = δ = d
Շնորք	.	.	ծ և ճ

Միշինք

.	պ = π = p
.	կ = κ = c
.	տ = τ = t
.	չ և ջ

Թառք

.	փ = φ = f
.	ք = χ = ch
.	թ = θ = th
.	ց և չ

Արդ, Միշինք-չափի հետևողս իբր սկզբունք կը յայտնեմ՝ որ

Ա. — Այս ձայնանիշ տառից դասաւորութեան համեմատ Հայերենի մէջ պէտք է կատարուի օտարազգի անունանց փոխադրութեան.

Բ. — Բայց այն չափի մէջ միայն՝ օրչափ

որ այդ տառերն կը համապատասխանեն այժմ իւրաքանչիւր ազգի սեփական հնչմանց.

Գ. — Իսկ ուր այդ պայմանն պակասի, մեր այժմեան տառից հնչումը պէտք է յարմարցնել իւրաքանչիւր ազգի յատուկ հնչչումներուն:

Ուրեմն, Միշինք-չափի դրութեան մէջ Բ.

և Գ. Նախագաստութիւններն կապակցեալ են Անի Հետ այնպէ՛ս որ մեկնութիւնք հն անոր իմաստին և ոչ թէ մերժումն, ընդհանուր օրէնքէն արտաքսապէս զարտուղութեան ձևի ներքև՝ ներքսապէս նոյն ձայնագրական ընդհանուր օրինաց (նախնեաց գործածածին) մասնական պարագայից հաստատութիւնք են և ոչ թէ եղծմունք, Համաձայն Հետեմու՛ք են և ոչ իսկապէս շեղմունք։

Եթէ ես Պր. Իսրայելիանի կարծեաց Հա. կառակեցայ՝ այն պատճառաւ էր՝ որ նա միայն ընդհանուր օրէնքը տըքի առջև ունեւնալով՝ նորա մասնական պարագաները նկատողութեան չէր առնէր. իսկ քեզ Հետ պէտք է Հակառակիմ, Պր. Միշէլ, այն պատճառաւ՝ որ դուք ընդհակառակն մասնական պարագաները միայն աքրի առաջ ունենալով՝ նկատողութեան ներքև չես ձգեր ընդհանուր օրէնքը (նախնեաց ևս գործածած ձայնագրական օրէնքը)։ մինչդեռ Միշէլն ուղիղ ճանապարհով, (որ թէ՛ առաջնոց և թէ՛ վերջնոց պակասները լրացընելով՝ կատարեալ կը լինի) Հարկ է տեսարենէն չնեացընելն ոչ ընդհանուր օրէնքը և ոչ նորա մասնական պարագաները։

Միշէլ. — Ձայնագրական ընդհանուր օրէնք ըսածդ ես ալ դուք ալ լաւ կը Հասկընանք՝ մի և նոյն բանը. բայց այդ օրէնքին մասնական պարագաներ բացատրութիւնդ ինձ անիմանալի է. խնդրեմ այդ վերացական մութ խօսքերդ թանձրացեալ օրինակով բացատրէ՝ որ Հասկընամ և ըստ այնմ ալ այն կամ ոչ պատասխանեմ։

Յանասեր. — Իրաւունք ունիս գործնականապէս բացատրութիւն պահանջելու. Խընդրեմ ըսէ. «Նախնեաց տառագարնութիւնն ձայնական օրինաց վրայ Հաստատուած է թէ չէ»։

Միշէլ. — Ինչպէս որ առաջ դուք ալ ցոյց տուիր՝ նոյնպէս ես ալ կ'ընդունիմ որ Հաստատուած է. բայց Հիմա տեղ տեղ չի Համապատասխաներ այդ օրէնքին . . .

Յանասեր. — Ուրեմն ահա այդ ընդհանուր օրէնքն է՝ նախնեաց Հրամայած տառագարնութիւնն, իսկ նորա մասնական պարագաներն են՝ այդ քո ըսած տեղ տեղ չհամապատասխանելն։

Միշէլ. — Ուրեմն միայն այդ տեղ տեղ չհամապատասխանելուն վրայ կը մնայ վէճերնիս։

Յանասեր. — Այո՛, այդ մասը միայն կը կազմէ մեր իրարմէ տարաձայնութեան նիւթը, և երբ այդ պարագայի մէջ ևս իրարու Հետ միարանինք՝ ուրիշ կէտերու մէջ արդէն Համամիտ ենք։

Միշէլ. — Ի՞նչ կէտերու կամ մասնական պարագաներու մէջ ուրեմն ինձ Հետ միարան չես։

Յանասեր. — Հետեալ կէտերու մէջ. Շրքնային, Կոկորդային և Ստամբուլին ու Շրջող սառուիքէն լերկերը միջիններու և միջինները լերկերու տեղ և շատ անգամ՝ նաև թաւերը միջիններու տեղ կը Հնչես և կը գրես, նախնեաց ձայնագրական օրէնքին Հակառակ. որով՝ զոր օրինակ

փոխանակ Հնչելու և գրելու

կը գրես և կը Հնչես

Paris = Պարիս,
Bossuet = Բոսուէտ,
Clermont = Կլերմոն,
Gambetta = Գամբետտա,
Tiepolo = Տիէպոլոյ,
Deodato = Դեոդատոյ,
Magenta = Մագենտա,
Correggio = Կորրէձիոյ,
Pecci = Փէձէի,
Piacenza = Փիաձենցա,

Բարիդ և կամ Փարիդ
Պոսուէ
Գլերմոն և կամ Գլերմոն
Կամպէդդա
Դիէթոյ և կամ Թիէթոյ
Տեոտաթ
Մամենցա
Գորրէձիոյ և կամ Փորրէձիոյ
Բէյի և կամ Փէյի
Բիալենցա և կամ Փիալենցա, և այլն։

Միշէլ. — Այդպէս կը գրեմ, այո՛. և այդպէս գրելուս միակ պատճառն այն է՝ որ նաև այդպէս ալ կը Հնչիմ. և որովհետև ձայնական սկզբունքի օրէնքով (որուն Համաձայն

ևս) գրութիւնն պէտք է ճիշդ Հնչումը ներկայացընէ, Հետեալսոր իմ ըրածս ձայնագրութեան բոլորովին Համաձայն է և դատապարտելի չէ։

Բանասեր. — Բայց զգե՛ղ կը դատապարտե՛ տէ նախնեաց ձայնագրութիւնն, որ հակառակը հնչեր ու գրեր են . . .

Միշէլ. — Ուրեմն նոյն այդ նախնեաց ձայնագրութիւնն զգե՛ղ ալ կը դատապարտե՛ երբ Ը, ց, 1, շի կը հնչուի ու կը գրեն ձ, շ, շ, 2, մինչդեռ նախնիք հնչած ու գրած են Կ, ֆ, ղ, ք . . . և Պր. Իսրայելեանի ըսածին պէս. « Ինչպէս որ դուռ Ը = ս, չ, ց և ց = Ժ, ձ Թարգմանիով ձայնից կը հետևիս, ես ալ կ'ուզեմ Ժ = պ և ձ = տ, և այլն, Թարգմանելով՝ ձայնից հետևի՛ր » .— (էջ 84. Ա. 40) :

Բանասեր. — Կը սխալուիս, Պր. Միշէլ, ձայնական սկզբունքի զեղծումնայն .— Իրու է, նախնիք ձայնական սկզբունքի համեմատ Ը = Կ, ց = ֆ, 1 = ղ, շի = ք ինչպէս հընչեր՝ այնպէ՛ս ալ գրեր են. բայց այդ հնչուածներն այժմ քողորմիկն փոխառն են օտար ազգաց մէջ և նոր հնչումներ են ստացեր . . .

Միշէլ. — Այդպէս ալ փոփոխառն են նոր հնչումներն են ստացեր՝ վերոյիշեալ Ժ, ք, 1, շ, և այլն, տառերը, որ եղեր են այժմ պ, ք, տ, ր . . .

Բանասեր. — Այդ հնչմանց յեղափոխութիւնն եթէ եղած լինէին մեր ազգին ընդհանրաբան մէջ՝ դուռ իրաւաւոր կ'ուռնայիր, Պր. Միշէլ, և ես բնաւ գոժուարութիւն չունէի ջնջի հետևելու. բայց քանի որ Հայ-ժողովրդեան գարգացեալ շատ մեծ խոռոչ մը ալ կայ (այժմ խնդիր չէ թէ այդ խոռոչն մեծանաստութիւն կը կազմէ թէ ոչ), որ այդ յեղափոխութեան հնչմանց ենթարկուած չէ, զուգ (որքան ալ բազմաթիւ լինիք) ձայնապաշտներն որոնք թեան առկն մասնակցան պարագայ մը կը ներկայացընէք ձեր տարա-ձայնութեամբ՝ ոչինչ աւելին, և մասնականի համար չէ ներքի ընդհանուրն երդանել .— Ուստի քանի որ Սրեկեւան Հայոց և Սրեմտեան Հայոց հնչմանց գաղաղամտութիւն կայ՝ գէթ գրառքեան մէջ իրարու հետ միասան զտառութիւն համար (որ գլխաւոր խնդրուած բանն է) պէտք է որ Արեւմտեան Հայերս վերոյիշեալ տառերու գրութեան մէջ հետևինք Արեւելեան Հայոց . . .

Միշէլ. — Կը գարմանամ թէ ինչո՞ւ դուռ Արեւելեան շատ մեծ խոռոչ մը տեսած աւտե՛ղ ալ ջերիկ կարծես կը փոփոխ այսօրին Արեւմտեան Հայոց ալ շատ մեծ կամ մասնականը մեծագոյն խոռոչն ալ չնկատելու. Արդ, եթէ այդ երկու մեծ խոռոչներն ու ձայնական օրինակ կը նպատակին, մին հնոյն և միւսն նորին, ի՞նչ պատահաւ նորն հնոյն պէտք է հետևի, և ոչ թէ հինն նորին, կամ ինչո՞ւ Արեւմտեան Հայք Արեւելայց պիտի հետևին, և ոչ վերջիններն առաջնոց .

Բանասեր. — Հի՛ն կարելի է կոչել այն՝ ուսկից տարբեր նորը լինի. բայց Արեւելեան Հայոց հնչումն նոյնն է այժմ՝ ինչ որ էր նախնեաց ատեն՝ շատ դարեր առաջ, և միշտ մի և նոյնն ձեացած լինելով՝ հի՛ն և նոր զանազանութիւն չունի իւր մէջ, ալ միշտ վերջինն է և միշտ նոր. հետևաբար որ թէ մեռած հի՛ն հնչման և կենդանի նոր հնչման խնդիր է այսօրոյ, ալ երբոք իրարմ տարբեր նոր հնչմանց, որոց մին պէտք է գէթ գրառքեան մէջ տեղի տայ միւսին՝ որ ուղղագրութեան միութիւն կազմուի .

Միշէլ. — Համարեով բաժնիդ պէ՛ս՝ որ երկուքն ալ նոր և կենդանի հնչումներ են, թող Արեւելեան Հայք յարմարընեն իրենց գրութեան կերպը Արեւմտեայցս, և ահա միութիւն . . .

Բանասեր. — Այդ բանը կարող է ինք Արեւմտեան Հայերս պահանջիլ Արեւելեաններէն՝ եթէ մենք լինէինք առանդապան նախնեաց ձայնագրառքեան, որ հնչմանց գրի առնուիլը կ'ուղղէ. բայց որովհետեւ Արեւելեան Հայք ունին այդ առաւելութիւնը Արեւմտեաններէն, հետևաբար մենք իրաւունք չունինք իրենցմէ պահանջելու որ հրաժարին ընդհաւնոր օրինաւոր օրէնքէն որ կ'ապրի և կը թագաւորէ, և զուն նպատակին օրէնքի մը՝ որ հսկասակ զոյ՝ բոլորած գեռ ևս կենդանի թագաւորող օրէնքին դրոշին դէմ և նորա հրամանէն ապաստամբս՝ կ'ուղէ ինքն թաղաւորը անկախութեամբ մի և նոյն ժամանակ, և այսպէս երկպառակութիւն ձգել հնազոյն թագաւորող օրինաց նպատակներուն մէջ .

Միշէլ. — Բայց ի՞նչպէս կարող պիտի լինինք Արեւմտեան Հայերս մեր մայրենի կամ մանկութեան ժամանակնու օտած և սովորած հնչումը փոխել, և այսուհետեւ Արեւելեան Հայոց պէս հնչել . . . Այդ անկարելի բան է. եթէ ուզենք ես՝ չենք կարող. մեր հնչումը մեզի զնգեմ եղած է, և բնականն են իրաւունք դէմ՝ չէ կարելի կուգիլ առանց ապարդիւն լինելու . . .

Բանասեր. — Հարկ չկայ որ հնչումներ փոխենք (որուն հաստատութիւն ալ չեմ տար) և կամ բնականն արուեստականի գործընելու ջանք ընենք ձայնից արտաքերտառքեան մէջ (որ և միայն ժամանակին դարաւոր և բնական ընթացքով փոփոխութիւն կրնայ կրել, և ոչ թէ որ և ի՞նչ բռնի ջանքով). բայց կարելի է Ունանաց տառադարձութեան մէջ առանձնական գրառքեան մի գործածել վերոյիշեալ քանի մը տառերոց համար, առ ի սեր միտքեան և նախնեաց ձայնագրառքին (որ նուիրական կրնայ ըսուիլ իւր հնութեամբ) յարգեցու համար .

Միշէյ. — Եթէ պարզապէս միտքեան սիրոյ և նախնեաց հիւն ձայնագրական օրէնքը յարգելոյն նպատակաւ միայն պէտք լինի հետեւի մեր Արեւելեան եղբայրներուն, ես և իմ կուսակիցներս յանձնառու կը լինինք միայն վերոյիշեալ տառերու գործածութեան մէջ հետեւելու նախնեաց ձայնագրական կանոնաց, այն պայմանով որ Պր. Իսրայելեան և նորա համախոհք ալ (թէ՛ Արեւմտեան և թէ՛ Արեւելեան Հայերէն) հետեւին մեզի մնացած ուրիշ տառերու գործածման մէջ՝ ինչպէս սր դուռն վեր պարզեցիր ձայնական-ակզբունքի գրութեան համեմատ :

Բանասեր. — Ուրեմն. եթէ Պր. Իսրայելեան և Պր. Միշէյ բարի կամ ունենան մինչև այստեղ բացատրուած Միշէյ-ճառիդ ընդունելու, և ըստ այնմ ալ օտար ազգաց յատուկ անոնները միասնաբար կերպով փոխադրելու հայերենի մէջ, երկու դէմ ընդդէմ կողմանց պատերազմը կը դադրի, երկու հակառակորդք կը բարեկամանան գործնականապէս ի գրութեան, և իմ Հայտարար պաշտօնիս յաջող ելքին վրայ կ'ուրախանամ նաև ես ինքն :

Բանասեր



4. ԳՐԱԲԱՐԻ ԵՒ ԱՇԽԱՏԱԴԱՐԱՐԻ ԽՆԴԻՐ

(Գ. Պատասխան յոչիսի ստորհանգստի երրորդ հարցման).

Այսպիսի վերնագիր կրող՝ Բուժ-Վնդի Ստորհանգստի մէկ հարցման պատասխանած էի նոյն ամսաթերթի փերրուարի թուոյն մէջ (1897. էջ 80—82), և հաստատեի էի նախ՝ թէ պէտք չէ գրաբար չեզոք բողոքովիս անխնամ բողոք, և երկրորդ՝ թէ գրաբարի ուսումը ազգային ընդհանուր վարժարանաց մէջ պարտադրիւ ընելն՝ ոչ միայն անօգուտ, այլ և վնասակար է : Տուած պատասխանին մէջ ալքի առաջ ունեցով ընդհանուր վարժարան և պարտադրիւ ուսումն բառերու իրականութիւնը՝ մեր ազգին մէջ եղած ուսումնարանները երեք կարգի վերածել էի. Ա. Նախնական կամ թաղական դպրոց. Բ. Միջնակարգ վարժարան, Գ. Բարձրագոյն վարժարան, (այս վերջնոց կարգին մէջ դասեւելով նաև Ժառանգաւորաց վարժարանները

կամ կղերանոցները). և հաստատեի էի՝ որ Առաջին և Երկրորդ կարգի վարժոցներու մէջ գրաբարի պարտադրիւ ուսումն թէ՛ անօգուտ է և թէ՛ վնասակար. իսկ Երրորդ (բարձրագոյն) կարգի վարժարանաց մէջ պէտք է գրաբար պնդի սովորեցնել, որ աշակերտը զէթ առնելու հասկերան պարզ գրաբար (մանաւանդ մատենագրական և պատմական գրութիւնները, իսկ Ժառանգաւորք կամ ֆահանայացուք՝ նաև եկեղեցական և աստուածարանական գրութիւնները). իսկ գրաբար գրելը՝ ըսել էի՝ թէ պէտք է յանձնել գրաբար լեզուի մասնագիտաց խնամքին :

Այս ամէնը հիմքեր էի այն իրականութեան վրայ, զոր բաւական տարիներէ ի վեր կրնամ ըսել ազգին ընդհանրութիւնը գործնականապէս ընդունել է և նոյն ճամբով ալ առաջ կ'երթայ. ուստի կը կարծէի՝ որ ընդդիմութիւն պիտի չլրէ կարծիք մը՝ որ արդէն կարծեաց ասպարիզէն դուրս ելած և գրեթէ ընդհանրութեան համոզումն եղած է և պատմական իրողութեանց կարգն անցած. և այս պատճառով ալ վերոյիշեալ պատասխանին մէջ ստէպ ստէպ գիտել տուել էի որ ես խնդիր « զործնական կէտի մէջ նկատելով » կը պատասխանեմ, և թէ՛ հնար չէ բռնի կերպով « գործնականապէս յառաջ մղել » գրաբարի յարգութիւնն ի վնասոյց, ըստ որում « իրաց բնական ընթացքին և յեղափոխական անյեղի օրինաց դէմ մտադրել » կը լինի այդպիսի ջանք մը, որ ապարդիւն է և ծաղրելի :

Այս տողերս հին գրաբարամոլներու սակաւթիւ մնացորդներէն զոմանս կ'երեւի զայն թակլեցուցիք են, որք ոչ միայն նոյն Հանդիսի մէջ հակառակ կարծիք յայտներ են և զիս իմ համոզման հետ դատապարտել են, այլ և իմ տուած պատասխանն ծաղրելի, վնասակար և անմտադրեան տիպաբանութիւն պակասութիւն են :

Ինչպէս ըսի՝ ես այժմեան ազգային դպրոցաց վիճակին իրականութիւնը մատնացոյց րբեր և նորա բառաւոր լինելը վկայել եմ համաձայն սեփական համոզմանս, հետեւաբար վերոյիշեալներէն եղած մեղադրութիւնը և դատապարտութիւնը մասնականաց կողմա-

նէ՝ կերպով մի ըսեմ՝ հասարակաց դէմ՝ լինուած է ։ Բայց Թողլով հասարակութեան իւր բռնած ուղղութեան իրաւունքը պաշտպանելու, նաև այդպիսի անգոր յարձակմանց դէմ՝ ես ինծի նպատակ կը դնեմ նախ իմ աւանդածիս ուղղութիւնը պաշտպանել տեսաւ կանաքար՝ իբրև ուղղամիտ վարդապետութիւն, և երկրորդ՝ գործնականապէս այլ կերպ լինելու անպատշաճութիւնն և անկարելիութիւնն հաւաստել ։

Այս նպատակաւ յօդուածս երկու մասանց կը վերածեմ. առաջինս մէջ քննել կ'ուզեմ թէ արդեօք Բանասերը դատապարտելի՞ է իբրև սխալ տեսութիւն (քեռքիա) ունեցող, երկրորդին՝ թէ արդեօք Բանասերը դատապարտելի՞ է իբրև տեսուչ ազգային եռակարգ (Թաղային, Միջակ, Բարձրագոյն) վարժարանաց ։ Եւ որպէս զի քննութիւնս անշալաւ լինի՝ ինչ քննիչ կ'ընտրեմ նոյն իսկ իմ հակառակորդաց մասնախումբը՝ առ այժմ՝ Խորայնեան — Ուն — Յորդանանեան եռանկէնութեանէն բաղկացած, իսկ լինաւոր՝ ընթերցող համբերատար հասարակութեան ուղղամտութիւնը ։

Ա.

Արդեօք Բանասերը դատապարտելի՞ է տեսականաբար ։

Խորայնեան և Համախոհք. — Պարոն Բանասեր, դուք մեղանչեր էք ազգային մեր նախնական լեզուին՝ գորաբար պատռաւ կան, յղկուած, կանոնադրուած ու կատարեալ սրբազան լեզուի դէմ, դուք նախատեր էք զայն և յանցաւոր էք. (Թու՜մ 1897, էջ 397, Ա սինակ, տող 16) ։

Բանասեր. — Ներեցէք, Պարոններ, նախ ես պէտք է գիտեմ թէ որո՞ւ հետ պիտի խօսիմ. երեքուեք և միանգամայն չեմ կրնար պատասխանել, կարելի է տարբեր զազափարաց տէր լինի իւրաքանչիւր ձեզ մէ . . .

Ուն. — Ոչ, ոչ. « մենք իսրայելեանի համակարծ ենք . . . » (Անդ, 185, Բ 27) ։

Յորդանանեան. — « Ունի պատասխանը ողջամիտ մտաց արդիւնք կը համարեմ, և որ խոհուն տրամաբանութիւն կը պարուանակէ, ուստի համակարծ եմ ես նորան բուրովին » . (Անդ, 396, Բ 28—31) ։

Բանասեր. — Եթէ այդպէս է՝ խնդրեմ ուրեմն մի առ մի ասացէք յայտնեցէք իմ յանցանքներս. եթէ պարտաւոր եմ՝ պատրաստ եմ քաւելու գործած չարքս ։

Ուն. — Դուք կ'ըսէք ձեր յօդուածի մէջ թէ « ծաղրելի է գորաբար գրելը » . (Անդ, 187, Բ 37) ։

Բանասեր. — Միթէ . . . խնդրեմ . . .

Յորդանանեան. — Զուր տեղ զնեզ արդարացընել մի՞ շանհար. « Միշտ եմ ի ներկայիս մենք ամէն կերպ ջանք ի գործ կ'ընենք մշակել և հմտանալ զանազան լեզուներու, և բազմիցս ևս կը պարելիմք ճոցապիտութեամբ, ի՞նչ անմտաբանութիւն կ'աւանդուինք պէտք է կոչել զայն — կ'արհաւմարհէք դուք, Բանասեր, իբր ճնացած և ծաղրելի, այն պատուական . . . յայկական լեզուն, որ ըրչր և համապատիւ է եղել երբեմն հին դասական յոյն և լատին լեզուներին » . (Անդ, 397, Ա 10—20) ։

Բանասեր. — Բայց խնդրեմ, թոյլ տուէք . . .

Ուն. — Ըսէք, « Ո՛վ ծաղրեց կամ ու մանաւանդ չարագոյն այնչափ բանասերներ՝ որք հին լեզուն գործածեցին ։ Եթէ կան յիշուած քանի մի ծաղրողներ, այդպիսիք իրենց արդէն ծաղրելի չեն գրական աշխարհի առջեւ » . (Անդ, 187, Բ 33—42) ։

Բանասեր. — Այդպէս է. ծաղրելի են. բայց դուք . . .

Յորդանանեան. — Այո՛, այո՛. « արդարեւ յոյժ բաղձալի է որ ամէն հայ գրական և հրապարակագիր Ունի նման մատնացոյց առնէին ձեզ և ձեր նմանեաց, Պր. Բանասեր, ձեր սխալ դատողութիւնը » . (Անդ, 396, Բ 32—36) ։

Բանասեր. — Ներեցէք, պարոններ, շնորհեցէք որ ես ալ խօսիմ ինչ իմ յօդուածս աշխարհաբար գրեմ էի՝ որ ամէնքը զիտաւ

հասկերնան, բայց զգրախտաբար զուգ բռնվանդակ ձեր գրաբարի նախանձաւոր եռանդեամբն հանդերձ՝ այլգրան սխալ հասկըցեր էք նոյն իսկ աշխարհաբարբ... Ի՛նչ արգիւթք պիտի լինէր ուրեմն եթէ ես հասարակաց զիւրահասկանալի լինելու համար՝ գրաբարով գրելու ցնորքն ունենայի... Ես երբ ժադրէի եմ գրաբար լեզուն և գրաբար գրելը, պր. Ոսմ, որուն համար այլգրան զայլացած յարձակումն կը գործէք ինծի դէմ։ Ահա իմ խօսքերն. « Գրաբար լեզուն փափաքիլ այսօր յարեցանել իրեն կենդանի բարբառ և գրելու լեզու ընել՝ այնպիսի գաղափար մ'է... որ այլպիսի փորձ մը... պիտի լինի թէ՛ ժադրելի, թէ՛ փնտալար և թէ՛ անկարելի. ժադրելի՝ ուղղոյն համար, փնտալար՝ նոյն իսկ գրաբարի », և այլն... Այս պարզ խօսքերուս մէջ՝ իմ թաղական պարօցիս հայ լեզու (աշխարհաբար) սովորող աշակերտն անգամ կրնայ պայծառ հասկընալ և քերականօրէն լուծել, որ ժադրելի բառն յարաբերութիւն ունի փափաքիլ յարեցանել, գաղափար և փորձ բառերուն հետ, և ոչ թէ գրաբար գրելու կամ գրաբար լեզուն հետ։ Ուստի գրաբարը հասարակաց խօսելու և կամ գրելու մի միակ լեզուն ընկնու փափաքը, գաղափարը, փորձը ժադրելի է, և ոչ թէ իբնիքն մէջ գրաբար գրելը, զոր և ես՝ իբրեւ բարձրագոյն գիտութիւն և իբրեւ նուիրական լեզու մը՝ գրաբարի — մասնագիտաց խնամքին յանձնուած տեսնելու փափաք յայտնէր եմ։ Ուստի ներքեցէք, պարոններ, տեղն է բնու թէ ձեր « շատ գիտութիւնը զնեզ մոլորութեան մէջ » ձգեր է. և զուգ պէտք է սովորէք ձեր մայրենի խօսած աշխարհաբարն անգամ դեռ լաւ հասկընալ, որպէս զի գրաբար կերպով հասարակութեան առջև չպատապարտէք անմեղ մը մեղաւորի տեղ։

Իսկ թէ ես, Պր. Յորդանանեան, գրաբարը հնացած լեզու եմ կոչեր՝ այդ բանի մէջ կարծեմ մեղք չեմ գործած, քանի որ բոլոր աշխարհ՝ աշխարհաբարը նոր և գրաբարը հին կը կոչէ։ Ահա զուգ ևս վերոյիշեալ ձեր խօսքին մէջ գրաբարը կ'անուանէք քոյր և հասակաւոր հին գասական լեզու.

ներին. եթէ քոյր է հին լեզուների, ուրեմն ինքն ալ այժմ պառաւեր հնացեր է այդ քոյրերի նման՝ իւր զստեր աշխարհաբարի ծննդեամբ։ Եւ միթէ զուգ կարող էք այժմ գրաբարը նոր լեզու կոչել, և հասարակաց ծիծաղը ձեր վրայ չշարժել։ — Ուրեմն, ես ինքս չեմ մեղաւորը՝ որ ուղիղ գրեր եմ, այլ զուգ էք մեղաւորը՝ որ սխալ հասկացեր էք. ես ոչ ժադրէի եմ գրաբարը և ոչ ալ արհամարհէր եմ, հետեւաբար նաև ձեր անազնիւ կերպով անուանած անմտաբանը չեմ գործած... Բայց զուգ, կ'երևի, պր. Յորդանանեան, դեռ ևս աշխարհաբարի մէջ ձեր գործածելիք բառերու իմաստները կընայաւորել չէք սովորած, ինչ որ կարելի է ամէն մի ազնիւ և զարգացեալ անհատի։

ՈՍՄ. — Եթէ զուգ չէք ժադրած գրաբարը և չէք արհամարհած, և այդ մեր սխալ հասկացումն եղբւր է, պէթ չէք կարող ուրանալ՝ որ զուգ, պր. Բանասէր, մեր « հին լեզուի պէմ հակալուրութիւն ունիք » (Անդ, 186, Ա 37)։

Բանասէր. — Սխալման մէջ էք, և ես ձեր ըսածը զրպարտութիւն կը կոչեմ։

ՈՍՄ. — Եթէ զուգ գրաբարը չէք ժադրեր, չէք արհամարհէր, և նորա դեմ հակալուրութիւն չունիք, ապա ուրեմն ինչու էք ուզեր որ ամէն հայ դպրոցաց մէջ անազնուի այն, որով կարող լինի ամէն մի հայ մարդ ուսանիլ զայն և օգտուիլ նորա մէջ ամբարուած կրօնական — մատենագրական — պատմական առատ գանձերն. « Ինչու մեր բազմերախտ նախնեաց գործոց ընթերցումը մասնագիտաց միայն կը սեփականէք. միթէ անոնք ամենուն յարգանաց և ընթերցասիրութեան առարկայք չեն։ Երկրպագութեան, նկարչութեան, երաժշտութեան, բժշկութեան և այլ գիտութեանց և արուեստից հետեղէք ի՛նչ յանցանք ունին, որ զուգ կը զրկէք զանոնք՝ կարդալու... զգրանելի նախնեանց և նոցա գեղեցիկ և բազմաթիւ թարգմանութիւնը... Եւ ի՛նչպէս կրնան սոքա յագուրդ գտնել իրենց բաղձանաց, եթէ ոչ՝ ուսանելով նախնեաց լեզուն յարմար ժամանակին, այսինքն՝ աշակերտութեան ընթացից մէջ ի վարժարանս » (Անդ, էջ 186, Ա 26—43)։

Պր. Բաճախեր, զուր տեղ կը ջանաք զձեզ արգարացընել, զուք հակասութեան մէջ էք. գորաբարի ուսումն կամ փաստակար. է և կամ օգտակար. միջին չէ կարելի լինել. եթէ փաստակար է՝ ինչո՞ւ սակաւուց այդ փաստ կ'ուզէք հասցընել, իսկ եթէ օգտակար է՝ ինչո՞ւ հասարակաց ամենուն օգտակար չէք դատեր զայն: Թողուցէք մէկդի ձեր կեղծեալ երկդիմակը. յայտնի հրապարակ եկէք կամ իբրեւ կուսակից և բարեկամ գորաբարի, կամ իբրեւ թշնամի և հակառակորդ:

ՔԱՆԱՆԱՆԵՐ. — Պարոն, քալ ճարտասան էք, բայց ոչ քալ տրամաբան: Գրաբար լեզուի ուսման մասին ես ոչ բացարձակ կուսակից կրնամ լինել՝ ամենուն օգտակար զայն համարելով, և ոչ ալ բացարձակ հակառակորդ՝ ամենուն առհասարակ փաստակար զատելով. և նախնեաց առած է թէ « Խմաստութիւնն ի միջին կայանայ »... Այո, ես շատ օգտակար կը համարիմ ջրաղացները առհասարակ ամենայն մարդկանց համար. բայց երբ մարդիկ լեռան մը գագաթը հասնաւորութիւն իրենց բնակարանները՝ այն ատեն (ոչ թէ ըստ ինքեան ջրաղացը, այլ) անօգուտ և փաստակար կը համարիմ բնականապէս այն ջանքը՝ որով ուզեն ոմանք գետին ընթացքը դէպ ի լեռը բարձրացընել՝ բնական օրինաց հակառակ, գիտալով որ այդ աշխատութիւնը զո՞ր ժամալսանաւորութիւն է և խափանիչ ուրիշ օգտաւէտ արդեանց, սպառելով այնպիսի նիւթական և մտաւորական ոյժեր, որք զուցէ այդ ձեռնարկութեան մէջ տպարդիւն կերպով իրենց ձիրքերը և ժամանակը չվատանելով՝ կարելու հնարք մը գտնելին ջրաղացքին արդիւնքը ստանալու համար, զոր օրինակ հողմաղաց մը հաստատէին: Եւ քուք ինքնին, որ անշուշտ ջրաղացին առաւելութիւնները կը ճանաչէք հողմաղացի մը հետ բաղդատելով, սակայն այս պարագային մէջ փաստակար պիտի գտնէիք ջրաղացի վրայ մտածելը և օգտակար պիտի դատէիք հողմաղացի մը հաստատութեան ջանք: — Այժմ մենք կը գտնուինք (եթէ ախորմելի է ձեզ՝ քիչ մ'ալ այլաբանօրէն կամ բանաստեղծաբար խօսիմ) ժամանակաց հնազոյն լեռան՝ նոր գագաթման վրայ. հին

լեզուները հին ժողովրդոց մէջ (որք այդ լեռան շտորանաղցին կողերուն վրայ բնակեր են) վազող և ռոտող գետեր էին՝ որոց ատենի մտաւորական աղօրները կը զարձնէին, և այժմ չէ կարելի այդ մեզմէ ցածագոյն բնթացող գետերը՝ մտաւորական մեքենայիւք վեր բարձրացընել և այնու ընդհանուր հասարակաց մտաւորական աղօրքը բանեցընել: Այս պարագային մէջ՝ բնականապէս ձեռքած աշխատարար լեզուի հողմաղացն (ներելի ըլլալ բացատրութիւնս՝ այլաբանութիւնը ամբողջացընելու համար) թէպէտ և ջրաղացին համեմատութեամբ դեռ շատ անկատար լինի՝ սակայն հարկ է որ մեր կարօտութիւնները անով լեցընենք, ջանալով զայն օր ըստ օրէ ճոխացընել, կատարելագործել, և ջրաղացին հաւասար և կամ՝ գուցէ անկէց ալ աւելի օգտաւէտ ընել սպագային մէջ:

Ինչու է՝ որ տրուեալտական (մեքենականութեան) միջոցով՝ անհնարին դիմադրութեանց յաղթելով՝ կարող եղեր են մարդկութեան զանազան անհասնելի ցածագոյն հոռած ջուրը դէպ ի վեր բարձրացընել և օգտակար կերպով գործածել. բայց արեւօք իւրաւունք է որ մենք պահանջները առնել մէկ մարդէ որ նոյնպիսի միջոցներ ունենան և նոյնքան գիտաւորութեանց դէմ մաքառին և յաղթեն, և առհասարակ ջուրը վեր բարձրացընելու հնարքով օգտուին. այսպէս նաեւ եթէ խումբ մ'անհաստակներու կարողացել են և պիտի կարենան նաեւ սպագային՝ յարմար միջոցներով և մտաւորական բնաստար կարողութիւններով ուսանել հին գրաբար լեզուն և օգտաւէտ ընել զայն, սակայն մենք չենք կարող անտեսել որ ընդհանուր հասարակութեան ամէն մի անապաք չեն կրնար ունենալ և չունին այդ յարմար միջոցները և պահանջուած կարողութիւնները նոյն գրաբարը առաջնոց նման սովորելու և գործածելու:

Դարձեալ հարկ կը համարիմ, Պր. Ոյմն, դիտել տալու ձեզ՝ որ դուք ձեր վերոյդրեալ խօսքերու մէջ տարիշ զբաղաւորութիւն մ'ալ կ'ընէք ինձ դէմ: Դուք մի գրէք որ ես նախնեաց գործոց ընթերցումը մասնագիտաց

միայն սեփականեր եմ. ես գրաբար գրելը և ոչ թէ գրաբարի ընթերցումը մասնագիտաց միայն սեփականներ եմ, քանի որ բարձրագոյն վարժարանաց մէջ գրաբարի լաւ հասկացումն կը պահանջեմ որ ուսուցչուի աշակերտաց, և ահա (ընդհանրապէս խօսելով և չմերժելով բացառութիւններ) այդ բարձրագոյն վարժարաններէն են որ յառաջ կու գան այդ յիշածներդ՝ երկրաշափտքեան, նկարչութեան, երաժշտութեան, բժշկութեան և այլ գիտութեանց և արուեստից հետևողք, որք բնաւ զրկուած չեն լինիր կարգադրուածներէն աքանւելի գրառածները, գեղեցիկ քարգմանութիւնները, և յագոյրդ գտնելոյ իրենց բաղձանաց :

Ոյմն. — Բայց «եթէ հին լեզուն բարձրացող վարժարանաց մէջ միայն ուսուցչուի, ուրեմն... կը զլացուի հայ ուսանողաց մեծամասնութեան մեր հին լեզուի ուսումն, ուստի և ազգային պատմութեան բուն և առատ աղբիւրաց ընթերցում» . . . մեր հին գրականական ճոխութեանց վայելքը», ազգային մատենագրութիւնը. — (Անդ, 186, Ա. 3-25) : Ուստի գէթ «զհին լեզուն պարտին չափաւորապէս ուսանել ըրողը աշակերտդ հայ վարժարանաց» (Անդ, 185, Բ. 44) :

Բանաւոր. — Ազգային ուսանողաց մեծամասնութիւնը՝ թաղական և Միջնակարգ դպրոցաց մէջ՝ կը վերաբերին այն հասարակութեան՝ որոց ծնողք (և կամ նոյն իսկ իրենց որդիք՝ աշակերտք)՝ իրենց նպատակ ունին չափաւոր դարդացումով սալ տղայոց մտաց, այնքան որ կարող լինին քանի մը սարիէ վերջը դպրոցի ընթացքն աւարտած ժամանակ՝ անխալ և բաւականին կոկիկ ոճով մամակ մը գրեւ շաշարհաբար լեզուով՝ առևտրական գործերը յառաջ վարելու համար, անխալ հաշիւ գիտնալ թուաբանական չորս գործողութեանց, զեղյման, երկից — կանոնի, բնկերական կանոնաց, և պարզ ու կոկ հաշուեմատեան կամ օրագրի մը բանի՝ աուրեւառնին անշիփօթ կատարելու համար, քանի մը օտար լեզուներ սովորած լինի, որոնք (մասնաւոր կեդրոնական քաղաքաց մէջ) անհրաժեշտ են գործ գտնելոյ և հաց աւ-

րելոյ համար : Այսպիսի դպրոցներէ զուտ ելած աշակերտք են՝ որ հետագրատանց մէջ, դրամատանց մէջ, վաճառատանց մէջ, մաքսատանց մէջ, առևտրական խանութներու մէջ, գաւառաց պաշտօնակալաց քով, և այլն, և այլն, միշտ երկրորդական տեղեր բռնած են, իրենց նպատակ ունենալով օրակաւ ապրուստին շահիլ, ծնողնին խնամել, ապագայ բնտանիք կազմել և զանոնք իրենց ճակատին քրտնջով սնուցանել... Այսպիսեաց ոչ կամքէն, ոչ սրտէն և ոչ մտքէն կ'անցնի կամ կ'ընայ անցնիլ որ իրենց զարգացական 3-4 տարիներու շրջանին մէջ զուր տեղ ժամանակ կորսնցնեն այնպիսի գիտութիւն մը ձեռք բերելու՝ որ իրենց նպատակին բնաւ պիտի չծառայէ, որ է գիտութիւն սովորիլ՝ գործի մէջ մտնելու, աշխատել կարենալու և ապրուստ ձարելու համար :

Այսպիսի հայ ուսանողք՝ ազգային պատմութեան և մատենագրութեանց գիտութիւնը խոր կերպով սովորիլը և բուն (գրաբար) ընդարձակ աղբիւրաց մէջ փնտռելը՝ յօժարակամ սիրով թողած են ի վայելչ այն սակաւթիւ և քան զիրենք բախտաւորագոյն ընթերցելով օժտուած ուսանողաց, որք իրենց լեզուները կարող պիտի լինին շարունակել բարձրագոյն վարժարաններու մէջ և ապագային ազգին ուսեալ դասակարգին պատկանիլ :

Արդ, կը զլացուի այն՝ ինչ որ անիրաւաբար կամ իրաւամբ չի տրուիր փափաքողին և պէտք ունեցողին՝ որ կը խնդրէ, բայց ինչպէս ըսինք՝ հայ ուսանողաց մեծամասնութիւնն թաղական և Միջնակ դպրոցներու մէջ ոչ կը փափաքի գրաբար ուսանիլ և ոչ աչ պէտք ունի անոր իր նպատակին հասնելու համար. հետևաբար բռնի ուժով սովորեցնելը գրաբարը այսպիսեաց՝ նոցա սրտին մէջ աստիճանութիւն պիտի յառաջ բերէ, և նպատակի չհասնելով՝ զուր տեղ ժամալու՝ ճառութիւն պիտի լինի իրենց, ուստի և ֆիւսակար քան թէ օգտակար. մասնաւոր որ այն բռնի սովորած կյանքը գիտութիւնն ալ քիչ ատենէն եթէ բոլորովին ալ չմոռանան և մէկգի ձգեն, սակայն անկէջ օգուտ ալ չեն կարող քաղել անկատարութեան պատ-

ձառաւ. իսկ կատարելապէս սովորելու համար, ինչպէս ըսինք, յօժարակամութիւն և բազմացած նպատակի մը հասնելու պիտուաբութիւն կարեւոր է :

Եթէ մինչև հիմա չէիք հասկացեր, ահա այս սողորեւ վերջը անշուշտ լաւ պիտի հասկընաք, Պր. Ոյմ, թէ « Ինչ կը նշանակէ Բանասիրին՝ գրաբարի ընդհանուր ուսման հարկատուութիւնը՝ կոչելը գնոր ժամականաց տոչափէն և անշահ գրադոշմէն հասարակաց համար, և ոչ միայն անօգնտ, այլ և վնասակար » . (անդ, 187, Ա 33—37) :

Ոյմ. — « Վնասակար բաց յայտոյց... յորժոց. արդեօք յընթերցողաց... վնասակար հոյն իսկ գրաբարի համար. չափազանց խղճմտութիւն, զայն (գրաբար գրելէր) մատենագրանաց անկեանց մէջ փոփոխելն է օգտակար և գործածելը փաստակար » . (անդ, 187, Բ 43—52) : Պր. Բանասէր, դուք ամենուս զարմանքը կը չարժէք գրաբարի ուսումը և ընթերցումը փաստակար քարոզելով... :

Բանասէր. — Միև ուրիշ գրապարտութիւն մ'ալ, Պր. Ոյմ, որ յառաջ կու գայ ձեր պէթ իմ գրած աշխատարար չհասկընալէն... զուցէ վարժարանի մէջ գրաբարի ժամանակ շնորհելով առատաբար՝ աշխարհաբարի ուսումն ետ ձգեր էք... Ես չեմ ըսեր որ գրաբարի ուսումը կամ ընթերցումը փաստակար է, այլ գրաբարը հասարակաց ընդհանուրիս պարտաւորիչ ընկնալ չանքն, գաղափարն, գրաբարը կենդանի լեզու ընելու՝ խօսելու և գրելու հասարակաց համար, գրաբարը ի մենեղոյ յարուցանելու մտածոչիւնն է փաստակար, ոչ միայն աշակերտաց համար՝ որք աննպատակ և բռնի սովորած ժամանակ՝ զայն պիտի առնեն և հետեւաբար չուսանին բայց եթէ կցկուտը կերպով քիչ առնեն մոռնալու համար, (եղած հազարաւոր փորձերու հետեւանք է խօսքը), ոչ միայն վարժապետաց համար, որք զուր տեղ իրենց ժամանակն ու ջանքը պիտի վատեն, առանց փորենալու գովելի արդեւնք մ'ունենալու միթիթաութեան հասնիլ, ոչ միայն ազգին ընդհանրառնան, որ աղայոց մտաւորական ոյժը սպառած պիտի առնեն ապարդիւն կերպով, մինչդեռ կրնային նոյն թարմ ոյժը

ուրիշ օգտուէտ նպատակի մը բանեցրնել... այլ նաև վնասակար պիտի լինի եղն իսկ գրաբարի վարժացման համար : Բնաւ թող ձեր զարմանքը չարժէ, Պր. Ոյմ, թէ Ինչպէս կարելի է որ գրաբարը ընդհանուր պարտաւորիչ ընկնալ չանքն՝ վնասակար լինի եղն իսկ գրաբարի համար... Միքենայ մը, զործիք մը, երգ մը, թատերախաղ մը, և այլն, և այլն, երբ ենթակայ դառնան միանգամայն վարժ և անվարժ, անճար և ճարտար ձեռքերու գործածութեան, քաջուս և թերուսումն դերասաններու արտասանութեան, շուտով կը խանգարին, կը կորուստնեն իրենց շնորհքն ու վայելչութիւնը, իրենց յարգն ու օգտակարութիւնը : Այսպէս նաև գրաբար մեր զեղեցիկ և վայելչաբան լեզուն, եթէ խօսից և գրութեան բռնի առարկայ դառնայ ընդհանուր ժողովրդեան մը՝ շուտով կ'այլանալի, կ'այլակերպի, և այդ մեր նախնեաց սքանչելի մտաւորական ծառղը՝ կը դառնայ զաղաւթնալ վիժած մը, ամէն գաւառաբարաւորու խառնուրդ մը, ամէն օտարական բառից զանգուած մը, խառնակութիւն մը, թնճար մը... Երանակչիւ մատենագիր մը խօսքերով ձեզի հետ խօսիմ, պր. Ոյմ. դուք կ'ենթադրէք անշուշտ թէ « գրաբար հասկընալը կամայական բան մ'է, կամ ոչինչ չանքով ձեռք կը բերուի. նոյնպէս գրաբար գրելը : Իսկ այդ բանին հետեւութիւնը՝ որ հասարակ ժողովուրդն... իւր մատենագրութեանն յուսահատած՝ բնականապէս օտար լեզուաց և օտար մատենագրութեան դիմէ » դուք աչքի առալ ունեցնէք էք... « Ստոյգ է, կը յաւելու դարձեալ նոյն բանիւրուն հեղինակը, որ հայ ազգն առաջինը չեղաւ... կողմնակցութեանց բաժնուէլու... Ուրիշ շատ ազգեր նոյն կորուսեալ հին մեծութիւնը փնտռելով դարեր անցուցին, և բովանդակ իւրոպա առնեց մը իւր մատաւորական գործութիւնն ասոր լրայ մաքառելով սպառեց... այնպէս որ մինչև մօտ ժամանակներ խաղական ընտիր մատենագրութեան քով լատիններէն ալ պահուած էր, զոնէ հրապարակական պաշտօնական գրականոց համար : Դեռ ասկէ քանի մը զար յառաջ յայտուն էր խաղիւժ լատիններէն յաւիտեան իբրև ընդ-

հանուր տիեզերական լեզու արժեքընդելու... յաղթ հիմանց վրայ հաստատուած լեզու մը՝ որ անկարելի կ'երևար նորելուկ լեզուներու, իւր տկար ու վատոյժ ծնընդոցը տեղի տար։ Երբ որ հարկն սկսաւ ստիպողական ըլլալ լատիններէն թող տալու և իւրաքանչիւր ժողովրդոց իրենց կենդանի լեզուաւը գրելու, այն ատենն էր որ գծաւթիւնը բորբորեցաւ ուսումնականաց մէջ... Կատարի, մոլեգին պաշտպաններ ունեցաւ լատիններէնը, որոնց՝ անոր խափանիչներուն վրայ թափած հրահրած անձեքները կարգադրը՝ հիմայ աչքին չի հաւատար... Այն ամէն ջանքին արդիւնքն ան եղաւ՝ ինչ որ ժամանակն անջան և անխափան իւր բնական ընթացքովն ընել պիտի տար։ — Սահմանները կտրուեցան. հին լեզուաց ոսպարեղ անցան. հին լեզուաց աւարատութիւնն ասով աւելի երաշխաւորեցաւ, նորերը կատարելագործեցան։ Ոչ հինը յարգը կորալնացուց, և ոչ նորերն իրենց կենդանի գործունէութիւնը... Բուսարէն լեզուին պատմութեանը մէջ մասնաւորապէս կը յիշուի՝ որ ազգին մէջ արդի լեզուին առանձին մտադրութիւն մը սկսելէն ետքը հին հնչւելնարները յիստականացաւ, այլ մեծ խնամքով կը մշակուի։ Իսկ մեր մէջը քանի որ արդի հայերէնն սկսաւ մշակուիլ, գրաբարի յառաջողութիւնն ալ անոր զուգընթաց եղաւ, և յառաջունէ շատ աւելի եռանդեամբ կը զբաղուի հայկաբանութեան (Քննակ. Քեր. արդի հայ լեզուի. Այսլոնսան. էջ 283—286)։

Կ'ուզէք, Պր. Ոմն, այս տողերուն վրայ աւելցընենք նաև Ստ. Նազարեանցի (գեղեցիկ գրաբար լեզուով գրողի) հետեւեալ խօսքերը. « Իսկ մեր ասեմք և կնքեմք. դիւրին ևս է յարուսանել զմեռեալս ի գերեզմանաց, քան թէ միջնորդութեամբ հնոյն լեզուի զնորն լուսաւորել զծողովորդ. խաւարն լուսով փարատել և ոչ խաւարաւ. կեանք ի կենդանութենէ աղբերանայ և ոչ ի մեռելութենէ » (Ճառ Յ. փորձ. հոգեք. տպ. Մոսկ. 1851)։ — Ուստի ես ալ վերոյիշեալ Քննադատական Քերականագրեան հեղինակին հետ կնքեմ խօսքը թէ « Գրաբար

ըը նոյն իսկ գրաբարի սիրոյն համար պէտք չէ որ կենդանանայ, այսինքն՝ ժողովրդեան սահմանն ինչպէս կամ իբր թէ սամկին՝ բեւրանը (հետեւաբար նաև գրչիկ մերքի) գրուի և համարելով հանգերձ որ այսպիսի ջանք մը հնարաւոր լինի և ոչ թէ անկարելի... »

Ոմն. — « Անկարելի... Այն որ հազարաւոր տարիներ կարելի է եղեր և այժմ ինչպէս անկարելի կը լինի... Դուք, Պր. Բանասէր, կը յեղյեղէք միշտ՝ թէ իրաց բնական ընթացքին և յեղափոխական օրինակնց դէմ է. ուրեմն շուտանիմք և չղբենք նաև ոչ մի օտար լեզուաւ, քանի որ այդ լեզուները բնութիւնը և յեղափոխական օրէնք չեն ուսուցաներ մեզ. չմարտերեւենք մեր մտքերը ոչ մի եկամուտ գիտութեամբ, ամբփոփութեամբ անտառները ուր էինք յառաջ և ուր կը բնակէ դեռ մարդկութեան մի փեմ մասն, և տանք զմեզ իրաց բնական ընթացքին և յեղափոխական օրինակնց ձեռքը » (անդ, 188, Ա, 4—20)։

Բանասէր. — Կ'ըսէք՝ այն որ հազարաւոր տարիներ կարելի է եղեր... Ոչ, ոչ, Պր. Ոմն, գրաբար խանգարումը, եղծումը շատով սկսեր է և հազարաւոր տարիներու պէտք չէ ունեցեր զէպ իւր գերեզմանը քայլափոխելու համար։ Դուք ինքնին կը գրէք թէ « Ով տեղեակ է հայերենի կրած յեղափոխութեանց, գիտէ՝ թէ Ե. դարէն յետոյ շատ քիչ դարեր տեւեց գրաբարի գոյոյնը ի բերանս. բայց գրութեան մէջ հասաւ մինչև մեր գարս՝ ուսման ձեռքը » (անդ, 188, Ա, 4—8)։ Այո, հասաւ առաւման ձեռքը և պիտի հասնի նաև մեզմէ վերջը զալիք հայ սերնդեան՝ նոյնպէս ուսման ձեռքը, բայց այնպիսի ուսման մը որ միայն վարժարանաց մէջ պիտի ուսանին հայ մանկտին և ոչ թէ իրենց մայրենի տան մէջ և այնպիսի ուսման մը ձեռքը՝ որ աղոթատան կան լեզու մի պիտի աւանդէ իրենց և անբնական, մինչդեռ նորա գոյոյնը մեռած է ի բերանս հասարակաց, աւելցընենք նաև ի գրի հասարակաց, և միայն անհատներու քով մնացեր և է պիտի մնայ նորա ուսումն, նորա հնարանական կենդանոյնը։

Կ'ըսէք թէ գրաբարի մինչև մեր օրերը

հասնիլը հազարաւոր տարիներու անընդհատ շրջանով մը եղած է. բայց թէ այդ տարիներու շրջանին մէջ ինչ փոփոխութիւններ կրած ք նա՞ չէք բացատրեր, չէք յաւելուր թէ այդ շրջաններու մէջ այն՝ որ Դ. և Ե. դարերու մէջ կայսաւու ու զուարթ էր և կենդանութեամբ յի՞ ի գործածութեան հասաւ թուկաց (համալրելով որ այդպէս եղած յինի, թիւ և պատճառներ ունինք փոքրակուսելու), յաջորդ Զ. և Է. Թ. դարերու մէջ արդէն իւր աշխոյժ կենդանութիւնը կորուստ էր, հիւանդացներ էր, ըսեմ, որովհետեւ իւր աւաղուլութիւնը փոքրուեց էր հասարակաց գրուածութեան առարկայ դառնալով և հետեւաբար իրաւունչիւր զաւառական խորքաւորներու նշանաւոր խորուրդ մը կը ներկայացընէր: Իսկ նոցա յաջորդող Ժ. ԺԱ. ԺԲ. դարերու մէջ արդէն հարուած հարուածի վրայ ստանալով՝ այն հասարակութիւնն որ զինքը գործ կ'աւելորդէ (զէթ անուամբ գրաբար գրելով), անշարժ ինկած էր մահամբռն անկողնոյ մը մէջ, ուսկից ԺԳ. դարու մէջ քայլ մ'առնելով ինկաւ ի գերեզման, իսկ ԺԴ. ԺԵ. և ԺԶ. դարերու մէջ փտութեան և ապականութեան վիճակի մէջ էր. և թէպէտ իւր անունը զրոյց մէջ կը յիշուի, այլ իւր կենդանութեան ներքե կը զարգանային, հրապարակ կու գային զանազան գաւառական բարբառներ, որոց ձուլումն պիտի ծնանէր այժմեան գրաւոր գործաւ ծառած արեւելեան և արեւմտեան աշխարհաբար հայերէնները... Իսկ գրաբարը... Գրաբարն այն ատեն կենդանացաւ՝ երբ որ բոլորովին մեռաւ, թաղուեցաւ և փոքեցաւ այդ դարերուն մէջ, և տեղի տալով աշխարհաբարին՝ այլ ևս հասարակաց գրութեան լեզու չգործաւ: Այդ ժամանակ միայն՝ երբ հասարակութեան անգութ հարուածները լուսնի ազդելու նորա մնացող ածխէնի վրայ, այդ վայրկեանին միայն՝ մասնագիտաց ձեռքով (Մխիթար Արքայի և իւր աշակերտաց և հետեւողաց մինչև մեր օրերը) իբրեւ նոր փիւնիկ յարութիւն առաւ նա գրքերու մէջ իւր նախնիէն գրեթէ բոլորական զեղեցիկութեամբ. բայց այդ գրքերն այնուհետեւ հասարակութեան ամբողջութեան համակրանաց զգացումն միայն յարուցին, սակաւաթիւ ան-

հատներու հոգեկան և մտաւորական սնունդ մատակարարելով, քիչերու հասկանալի և օգտակար լինելով, բայց ժողովրդեան մեծամասնութեան համար իբրեւ գեթոյայն որ զօգանքն արդիւնք յառաջ բերելով: Եւ այդ ժեմոյայն զօգանքիւնն այնքան տաղտկացաւ ԺԷ. ԺԸ. և ԺԹ. դարերու մէջ՝ որչափ որ աշխարհաբարի երգեհոնին ստեղծութիւնն սկսան կանոնաւորուիլ, և անհրաժեշտ կարեւոր եղած, խնդրուած և տենչացուած մտաւորական զմայլումն և ներդաշնակ հասկացողութեան ձիրք մատակարարել կրցան հայ աւանդաց ընդհանրութեան, որ երբեք չի զլանար հնոյն վայելքն ալ հնասիրաց և հին լեզուի ուսման պարագլուխ ընծայելու, առանց սակայն յանձնառու լինելու որ նոյնն իւր ականջաց ալ բռնի քաղցրացընէլ ջանացուի: Դուք կը գտնատիք, Պր. Ոսկ. որ ես գրաբար ընդհանուր հասարակաց գրութեան լեզու ընելու փորձը՝ իրաց բնական ընթացքիւ և յեղափոխական օրինաց դեմ ի գործ դրուած ապարդիւն ջանք մը կը քարոզեմ. և այտի կը հետեւցընէք՝ թէ ուրեմն ո՞ր և ինչ լեզու և գիտութիւն պէտք չէ ուղղորդել այտուհետեւ, և վայրենաց նման անտուգանքով լինինք... Թէ որչափ արդեօք ձեր տրամաբանելու ոճն անտեղի է, և թէ ինչ անխաբարութիւն ունի ձեր հանած արդիւնքն իմ յառաջ բերած խօսքս՝ հարկ չկայ բացատրելու. արդէն հասարակաց ուղղամտութիւնն կը վկայէ այդպիսի պարագայից մէջ թէ « Որ յոյժ ցուցանէ՞ աշխարհ ցուցանէ »... և ոչինչ ցուցանեմ մի դէմ՝ այլ ևս խօսելու հարկ չի մնար...: Այդ իրաց բնական ընթացքն և ժամանակին յեղափոխական օրինք կը պահանջեն և կ'արդիւնագործեն՝ որ աւելական ներքե վանուած ամենայն ինչ անզգաբար թաւալման մի մէջ գտնուին, որ ամեն մարդկային անհատի կենաց հետ միասին՝ անցնին և հանաւան նաեւ կենաց մարդկային ընկերութեան՝ նոյն ընկերութեան հետ կապ ունեցող առօրեայ առարկաներով: Այլ աւարկայից մին է նաեւ լեզուն կամ ըսեմ այն արուեստական յորինուածութիւնն զոր հնարեր են մարդիկ իրարու զազափարներ հաղորդելու: Ինչպէս չէ կարող ծնած երե-

խայ մը ժամանակի շրջանին մէջ՝ բնական իրաց օրէնքի ներքեւ ապրելով՝ չմեծանալ, չհասունանալ, չմեռնիլ, չթաղուիլ, այսպէս ալ չէ կարող նոյն երեխայի նման մտաւորական ծնունդ ունեցող լեզուն ալ զարգանալ, չճոխանալ, չհնանալ, չմեռնիլ և չապականիլ, թողլով իւր վերը կատարելու ուրիշ նոյնանման ծնունդ ունեցող կեանքի մը : Էշ ինչպէս չէ կարելի յուսալ որ միանգամ ծերացած և մեռած մանուկն յարութիւն առնէ գերեզմանէն և վարձեալ նոր կեանք սկսի մանկութեան, այսպէս նաեւ չէ կարելի յուսալ որ միանգամ ծերացած և մեռած լեզու մը՝ վերստին նոր սերնդեան համար ծնանի, և արդէն նոյն սերնդեան մէջ թագաւորող նուրձին թագուհոյն (աշխարհաբարի) գահը յափշտակէ : Այո՛, պիտի գալ ժամանակ (ցորափ մարդկութիւնը տեւէ երկրիս վրայ) որ այսօրուան աշխարհաբարն ալ իւր նախորդ գրաբարին նման ծերանալով և մեռնելով՝ տեղի տալ ո՛ր գիտէ երբ իւր յայտը ծնանելիք թագուհոյ մը զօրութեան : Այս է արհաւանի այն բնական իրաց ընթացքը և ժամանակի յեղափոխութեան օրէնքն որոյ գէմը դնել անկարելի է, որոյ հակառակ մաքառել ապարդիւն է և ծիծաղելի :

Ո՛վն. — Բայց դուք կ'ըսէք, Պր. Բա. նասեր, թէ « ներկայեւ դար մի յատուկ կը գրուէր գրաբարը և ալ այժմ՝ Բոլոր նշանաւոր Մխիթարեանք... և յաշխարհական դատէն... շատեր, որք կամ գուտ գրաբար գրեցին, և կամ թէ մին և թէ միւսն, ներկայեւ դար մի յատուկ են ապրած » . (անդ, 187, Բ 26—36) :

Բանասեր. — Այս քանի անգամ է, Պր. Ո՛վն, որ եւ պարտաւորեալ եմ ասելու ձեզ թէ դուք ինծի գէմը գրաբարութիւն կը գրէք. կամ վերստին վարժարան մը մտէք աշխարհաբար լեզուն անսխալ հասկընալ սովորելու, և կամ եթէ լաւ կը հասկընալ մի ներքէ ձեզի ըստ կամս խեղաթիւրել իմ գրածիս իմաստը... Եւ ո՛ր տեղ ըսեր եմ թէ « ներկայեւ դար մի յատուկ կը գրուէր գրաբարը և ալ այժմ » . Ինչո՞ւնք ինչպէս եւ կ'ընեմ ձեր ըսածներու մասին, այսպէս դուք ալ նեղութիւն կրեցէք իմ այդպիսի մէկ

խօսքս ցոյց տալ գրչի, էջի և տիւնակի և տողի կոյժամբ... ապա թէ ոչ՝ ուրիշի խօսքը բերու իմաստն այլափոխել, և զգրութեան ներ մէջ բերել՝ փոխանակ գրութեանը և այդ կերպ հակամատուցիւն ընելուն՝ բանաճեղճ հասարակութիւնը ոչ հաճելի տիտղոս փշուծայէ, որուն եւ ինքն ալ չեմ փափաքիր արժանանալ : Մտիպեալ եմ զարձեալ Կոնստանտնուպոլիսի լեզուի դպրոցի ղեկավար Գրիգոր Բա. նասերի խօսքը, որ եմ կամ գրել թէ « Գրաբար լեզուն Կիսիականի այսօր ցոյց տալ ընդհանուր իրեն կենդանի դարձաւ և գրեցող լեզուն ընդ՝ այնպիսի գաղափար մ'է պարելի է ներկայեւ դար մի յատուկ ներքէ լինել ունենալ » (անդ, 80, Բ 25—26) : Գրեականական ամենապարզ լուծումն ալ կը բաւէր հասկընալու համար թէ Կոնստանտնուպոլիսի... զգալափար... Ի՞նչ բանի դառնալ փար... գրաբար լեզուն յարուցանելու է իրեն կենդանի բարբառ և հասարակ գրելու լեզու ընելու գաղափարը... Արդ, ո՛ր է այս տեղ գրելուն մէջ ձեր ըսածը թէ « ներկայեւ դար մի յատուկ կը գրուէր գրաբարը և ալ այժմ »... Եթէ թաղական կամ միտակ վարժարանի զպրոցական մի այդպիսի մեծ սխալ ընէր քեւրականական լուծման մէջ՝ անշուշտ վարժապետին և իւր զասակցաց առջև պէտք է կարմրէր և զուլմը կախած գետին նշմարէր... :

Այո՛, Մխիթարեանք և ուրիշ շատերը մինչև ցայսօր գրաբար լեզուն մշակել են և գրաբար ալ գրել են և կը գրեն և պիտի գրեն անշուշտ նաեւ ապագային մէջ. և այդ պատճառաւ ալ Պր. Գորգանեանին հետ եւ ալ կը ձայնակցեմ թէ « Հայ ազգը չէ կարող բաւականին երախտագէտ լինել առ հայ հոգեւորականն (յաւելունք նաեւ առ ոչ քաղաքացի հայ աշխարհականն), մասնաւորապէս առ արժանապատիւ Մխիթարեանս, որոց շնորհիւ պահպանուել և քաջ մշակուել է հայկական ոսկեյիլիկի դարձն լեզուն » . (անդ, 89, Բ 17—22) : Բայց ասկէք ի՞նչ կը հետևի. կը հետևի՞ ուրեմն իւր թէ Մխիթարեանք ուզած լինին գրաբարը հասարակաց գրութեան լեզուն ընել... քաւ լիցի. ապա թէ

ու միշտ պէտք էր գրաբար գրելին և ոչ աշխարհաբար ալ, պէտք էր Բաշմէլ և Անգլո-հայկականներն ալ գրաբար միայն հրատարակէին. բայց մենք ի՞նչ տեսնե՞նք ընդհանրապէս որ նոքա մէկ կողմէն գրաբարի ուսումը մինչև մեր օրերը եռանդեամբ շարունակած ժամանակ, մի և նոյն ատեն գլխաւոր մօլիւ են աշխարհաբարի ընդհանրանալուն, կանոնաւորութիւնն և հասարակաց գրութիւն լինելուն. նոքա են որ սկսած նոյն իսկ Մխիթար Արքայ Հիմնարկին օրերէն և նորա ձեռքը՝ ստալին անգամ՝ աշխարհաբարի չեզոյի քննադատութիւնն հրատարակել տպագրութեամբ, փոքա են որ Բաշմէլ և Եւրոպոս հնագոյն պատմութեան իրարադրութիւնն ընդհանրապէս աշխարհաբար լեզուով, նոքա են որ ցորեններ են Աշխարհաբարի բառգրքները, քննական աշխարհաբար լեզուի քերականութիւնները, ուսումնական և հոգևորական գրքեր, գրադարաններ, և այլն, և այլն: Ուստի Մխիթարեանց և նմանեաց՝ գրաբար մատենագրութեան մասին ունեցած մեծ արդիւնքն այն քանի մէջ է՝ որ նոքա դասական-մատենագրաց ուսումը վերանորոգեցին (ինչ որ նախորդեցին գրաբար մէկ խաւարի մոռացութեան ներքին թաղուելէ), և հարազատ աղբիւրները ընծայեցին ընտիր տպագրութիւններով եւսումնական աշխարհի, որովք կարելի եղաւ հայկական մատենագրական — պատմական և կրօնական ուսմանց զգալի յառաջադիմութիւն մը ձեռք բերել: Այսօր ևս ոչ միայն Մխիթարեանց, այլ և ամէն կրօնական և աշխարհական հայագէտը, որը գրաբար լեզուի բառման սեփական ճիշդն, մասնագիտութիւնն անտանձնեք են կամ ապագային պիտի ստանձնեն, մի և նոյն յարգն և արդիւնքն ունին և պիտի ունենան մեր ազգին մէջ, ինչ վարկ և արժանիք որ ունին արևմտեան ազգաց մէջ քառիներէն լեզուի մասնագէտը:

Ո՞րքայ. — Բայց Ս. մեր գրաբարը դեռ շատ մեծ և լատիներէնի վիճակէն. դեռ փոքր ի շատէ հասկանալի և ժողովրդեան եկեղեցական պաշտամանց լեզուն... մինչդեռ բոլորովին չէ խորթացած՝ Զանադ նորոգել և հասկանալի ընել հաւատացեցո՞ղ, վարժարանաց միջնորդութեամբ » (անդ, 187, Ա 16—25):

Բանասէր. — Եւստ ևեթ է... Կարծեմ որ ինքնախաբարութեան մէջ կը գտնուիք, Պր. Ո՞րքայ, գրաբարը դեռ փոքր ի շատէ հասկանալի ժողովրդեան և դեռ բոլորովին խորթացած չի համարելով. այժմ անցած են ԺԶ. ԺԷ. և ԺԸ. Գրաբարը, որոց մէջ կարելի էր այդ բացատրութիւնները ճշմարիտ և կամ ճշմարտամասն լինէին, իսկ այժմ ԺԹ. կարու վերջերը՝ Հայոց երկրի ոչ մի կողման ընդհանրութեան չէ կարելի վերագրել: Եւ ինքնին երբեմն այդպէս կը կարծէի՝ քանի որ հայաբանական սահմաններն կոտորանքաւորուել և կամ շատ շատ արևմտեան Հայաստանի կողմերէն անդին չէին տարածուել փոքրատեղեան անաւթեանց մէջ. բայց երկար տարիներ առիթ ունեցած լինելով շրջիւ Հունգարիայ, Տաւրիայ, Ռուսիայ և Պարսկաստանի գաւառներէն ոմանց ոմանց մէջ, գրաբարի ժամօթութեան մասին ըրած փորձերս և դիտողութիւններս՝ ինծի հետեւեալ իրականութեան զազաւորը կազմել աուին. Հունգարիայը գրեթէ խալաւ կորուսել են (բացառութիւնները չհաշուելով) իրենց մայրենի թէ՛ նոր և թէ՛ հին լեզուին հասկացումն և իրարաբանութիւնը. իսկ մնացեալ երեք պետութեան հպատակ Հայերը՝ կը խօսին և կը գրեն աշխարհաբար լեզուաւ՝ խալաւներն իրեն գաւառականին յատկութեանց և ընտանեկան ճեղքուն հպատակեցընելով զայն. իսկ գրաբարագէտները (չեմ խօսիր բարձրագոյն վարժարաններէն դուրս ելլող ուսումնականը) լայն, որք տեղական ժողովրդէն բարձր գաւառական կը պատկանին) Գիտական լայն տեղաւորութիւնը և փնտռել, քանի մի գէթ վաթսմամբնի ծերունիներ և կամ այս ինչ կամ այն ինչ վարդապետի քով առանձինն ուսումնաւորած տիւրացուներ, որոց սակայն հասկացածն է միշտ հակացածէն շատ աւելի է, թող սխալ կամ լեռնալայնաբար հակացումներ, և այս՝ ոչ միայն աշխարհաբար և կամ տիւրացումներ մէջ, այլ նոյն իսկ տեղաւորանքներ մեծամասնութեան մէջ: Այսինքն են անա գրաբարագէտները. իսկ մնացած ժողովրդեան ընդհանրութիւնն իրաւ և կը գործածէ շատ մի ընտիր գրաբար բառեր, նաև ձևեր երբեմն որ ժառանգութիւն մնացել են

ընտանեկան հին լեզուէն, և գրաբար թա-
սերոս շատերուն նշանակութիւնը գիտէ (վասն
զի նաև իւր գաւառականին սեփականք են),
բայց ասկէ անդին՝ ոչինչ, շատ շատ յիսուն
տողի մէջ՝ մի կամ երկու պարզ և կարճ
խմաստ մը հասկընայ, բայց ոչ աւելին: Ուայց
ամէն գրաբարագէտ կրնայ կշռադատել՝ որ
թատերոս և քանի մի ոճերոս գիտութիւնն
գրաբարը քիչ քիչ շատ հասկընալու կարողու-
թեան չեն հասցընիր: Եւ որովհետև ձեր
խօսքերը եկեղեցական պաշտամանց լեզուն
և հասարակաց բառերը կ'ամփոփեն, հե-
տեաբար ես ալ կ'ըստինեմ որ վերոյիշեալ
փորձերը կատարելու եմ գլխաւորապէս առե-
տարանի (ամենապարզ գրաբարի), սաղմոսի,
ժամանագրոց և Հնգամատենին ու Եղիշէի
պատմագրութեան վրայ, և սեղ սեղ ալ նոյն
խիստ անոյշ և բնական զանգատիկ մը լսելու եմ
պարզամիտներէն՝ թէ « ինչո՞ւ արգելք ա-
զօթքները գրաբար կ'ըսէ տէրտէրը՝ որ բան
չիմացուիր. ախրը մեզի համար է ազօթքը,
բայց մենք կարողացու մարդիկ չենք որ հաս-
կընանք ու միմեծարուինք »:

Ո՞վ. — Ահա յատկապէս այդ բանին
համար է որ ես կ'ըսեմ իրաւամբ՝ թէ
« հին լեզուի տառման հարկաւոր է ամենեւեմ
նաև կրօնական տեսակետիւ »: Աստուածա-
շունչ զրոյց և որբազան պաշտամանի լեզուն
գրաբարն է, և այն պիտի մնայ՝ ցորչափ
բողոքականութիւնը չյաղթանակէ մեր հա-
մոզմանց և եկեղեցւոյ վրայ: Այդպէս է և
լատին լեզուն առ արևմտեայս, և հին յու-
նարէնն, ասորերէնն և այլն »: (անդ, 186,
Բ 46—54): — Դարձեալ, « մարդս Աստուծոյ
հետ խօսելու ժամանակ իւր ըսածները փո-
խանակ թութակօրէն կրկնելու, կամ հնդկե-
րէնի պէս լսելու »: Գիբբը, զայնս հասկա-
նալն անօգնու ըսն է, կամ անհրաժեշտ
չէ »: (անդ, 187, Ա 26—30):

Շարաշարեղի



ՄԱՅՐՆ ԻՄ

—

Ո՞վ իմ իւր կաթը կը ջամբեր
Միմ փորը էի, և զիս սեղմէր
Սըրտիմ վըրամ տղնագուրէր:
Մայրիմ իմ:

Ո՞վ կը շարժէր իմ որդոցիկ
Իւր մագնիսի երգով քաղցրիկ,
Ջերդ քոյմիմ մէջ երգէ թընծիկ:
Մայրիմ իմ:

Երբ կը փակուիմ իմիմ ալեր,
Ո՞վ կը մայի յերեսս ի վեր,
Կաթեցնելով սիրոյ շիթեր:
Մայրիմ իմ:

Եւ երբոր ես ըլլամ հարբուկ,
Ո՞վ զըրկէ իմ ծամրացած գլուխ,
Վրաս դուպլով սըրտովը բուխ:
Մայրիմ իմ:

Եւ ո՞վ տըլաւ իմ ամեմայմ
Խաղալիքներս և իմ գոգչամ,
Ո՞վ կըրթէ զիս ծումկերում վըրամ:
Մայրիմ իմ:

Քալած ատենս ելը կ'ընմամ, ո՞վ
Վազէ բըռնել ըսելով, « ֆ »,
Ճիշդ ցաւած տեղիմ համբուրելով:
Մայրիմ իմ:

Ո՞վ աղօթել կու տայ ին Աստուած,
Եւ պաշտել զիմ քոյր սրտամց
Իբրև իմիմ մեն բարեբարս:
Մայրիմ իմ:

Ի՞նչպէս կըրմամ ըլլալ առ քեզ
Ես ապեբարխտ, սըրբապիղծ Մ
Որ քու սիրով զիս պաշտպանես,
Մայրիմ իմ:

Ա՞հ, չեմ կըրնար իսկ մըտածել:
Իմ պարտքս է կեանքը պահպանել: